



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1
5-68

23 JUN 2009

Բարձր Ը. Ի. Յ. Տ. Գրադարանի Գրադարան

5-68 ՀՈՈՎՍՍՅԵՑԻ ԻՍՍՏԱՍԷՐ

ԷՊԻԿՏԵՏԻ

ԿԵԱՆՔՆ

ՈՒ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

80117



ԶՍԻԷՆ

ՀՐԱՄԱՆՈՒՄ

Տ. Տ. ՄԿՐՏԵՂՈՒ

Վեհափառ և սրբազնագոյն կաթողիկոսի-

ԱՄԷՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1903

Дозволено цензурою С Петербургъ,
26 октября 1901 г.

Թարգմանելով գործնական եւ երջանիկ
կեանքի ուղեցոյց սոյն զրջոյկը, առաջարկում
ենք աշակերտներին, պատանիներին՝ որ
իրենց մատաղ սրտերի մէջ ընակեցնեն դէպի
ճշմարիտ կեանք առաջնորդող այս խրատները
եւ երիտասարդներին՝ որ իրենց ծաղիկ հա-
տակն ու կեանքը այսպիսի առաքինութիւն-
ներով զարդարեն:

Ո՞՞ն աւելի հարթ դարձնելու համար
շատ տեղեր ազատ ենք թարգմանել. քաց
ենք թողել մի քանի զրոյցներ եւ շատ տեղեր
էլ երկար նախատասուծիւններ կամ հա-
տուածներ համառօտել ենք:

ԶԱԵԻՆ ԱՐԵՂԱՅ

Է պ ի կ ս ե տ ի կ ե ա ն ք ը

Էջերիկատեղը ծնուել է Փոքր Ասիայի*
Հերասպոլիս քաղաքում, Քրիստոսի ծննդից
վաթսուհին տարի յետոյ:

Քրիստոսի ծննդից մօտ հարիւր տարի
առաջ, Փոքր Ասիան նուաճուած էր Հռովմայեցիներից և կառավարուում էր հռովմէական փոխարքաներով:

Նուաճուած բնակիչները հարկ էին վճարում հռովմէական կայսրութեան և ցոյց էին տալիս կատարեալ հպատակութիւն: Փոխարքաների կամքի համաձայն հպատակ բնակիչներից շատերին Հռովմ** էին բերում և այնտեղի հարուստ մեծատունների և իշխանների ստրուկներ դարձնում:

* Փոքր Ասիան այժմեան ասիական տաճկաստանն է.

** Հռովմ—Հռովմայեցւոց կայսրութեան մայրաքաղաքն է:

Այդպէս և Էպիկտետը մանուկ հասակից Հռոմ՝ բերուեցաւ, որպէս ստրուկ Էպափրօզիտեսի, որը Հռոմայեցաց նոյն ժամանակուայ Ներոն կայսեր ամէնամօտիկ բարձր աստիճանաւորներից մէկն էր և առանձնապէս յայտնի էր իւր խստութիւններով ու չարագործութիւններով:

Էպիկտետի տէրը, ինչպէս և նոյն ժամանակի այլ տէրեր, շատ խիստ ու կռաւիտ էր վերաբերուում ստրուկների հետ, նոյն իսկ շատ անգամ զուարճանում, հրճուում էր, երբ նրանց չարչարանքի, տանջանքի էր ենթարկում:

Մէկ անգամ Էպափրօզիտեսը մտածեց փորձել Էպիկտետի քաջութիւնն ու համբերութիւնը և սկսեց գաւազանի հարուածներով ծեծել նրա ոտքերը: Էպիկտետն անմռունչ և անտրտունջ մնաց և ամէնեւին ձայն չհանեց. սակայն հարուածները քանի դնում այնքան աւելի և աւելի էին սաստկանում. այն ժամանակ Էպիկտետը շատ հանգիստ կերպով ասաց իւր տիրոջ.

— Այդպէս կարելի է և ոտքս կոտրել:

Էպափրօզիտեսը հարուածներն էլ աւելի սաստկացրեց և վերջն էլ ամբողջ ոյժով խփեց Էպիկտետի ոտքին, ծնկից ցած. ոսկոռը

աչրուեց և Էպիկտետն ընկաւ գետին. նա ոչ լաց եղաւ, ոչ էլ հառաչեց, այլ հեղու թեամբ և մեղմութեամբ ասաց իւր տիրոջ.

— Չէ՛ որ ասացի քեզ թէ ոտքս կը կոտրես:

Էպափրօզիտեսը շատ զարմացաւ իւր ստրկի անչափ համբերութեան վրայ և կարմրեց, ամաչեց իւր այդ աստիճան անխրոջութեան, խստասրտութեան համար: Էպիկտետն իւր ամբողջ կեանքում անդամալոյծ մնաց և ծանր աշխատանքի համար միանգամայն անընդունակ: Սա իւր նիստ ու կացով, վարք ու բարքով բոլորովին զարմացրեց իւր տիրոջ. իւր պարտականութիւնները շատ լաւ էր կատարում և վերջացնում էր ամէնքից շուտ. առհասարակ զբաղւում էր գործով ոչ թէ պատժի երկիւղից ստիպուած, ինչպէս միւս ստրուկները, այլ սիրով և ուրախութեամբ, երբէք չամաչելով և չընկճուելով իւր ստրկական դրութիւնից:

Միանգամ Էպափրօզիտեսը գովաբանեց Էպիկտետին և հարցրեց. «Նրտեղից է անբախտ և խղճալի ստրկի միշտ բարի ու հոգեկան ուրախ տրամադրութիւնը:

Էպիկտետը պատասխանեց:

Նղիր արդար, սուրբ, այն ժամանակ

ուրախ և ազատ կըլինիս. միայն յանցանք-
ներն ու մուրուրութիւններն են, որ մարդկանց
ստրուկ են դարձնում. ամէն մի ցանկացող
կարող է ստանալ ոչ եթէ կեղծ, այլ ճշմարիտ
ազատութիւն. սակայն դրա համար հարկա-
ւոր և անհրաժեշտ է ազատել իրեն իւր
ցանկութիւններէից, տուփանքներէից:

Էպափրօզիտեաք հասկացաւ, որ Էպիկ-
տետի մէջ մի ինչ որ արտաքոյ կարգի բան
կայ, որով և տարբերում է միւս բոլոր
ստրուկներէից, ուստի ոչ միայն զատեց նրան
միւսներէից, այլ և ազատութիւն պարգևեց:

Էպիկտետն ազատութիւն ստանալով
սկսեց սովորել ժամանակի յայտնի Հովրա-
տիոսի և Մուզօնեա թուփայի ստոյիկեան*
իմաստասէրների մօտ:

* Ստոյիկեան ուսման կամ շիօլայի հիմքը
դրաւ յունաց յայտնի իմաստասէր Զենոն, որ ծնունդ
է 340 թ. Ք. ա. Ամբողջ քսան տարի շարունակ
աչակերտեց զանազան փիլիսոփաների և ապա սկսեց
վարդապետել Աթէնքի նշանաւոր նկարներով զար-
դարուած սիւնադարձ սրահում. ահա հէնց այդ իսկ
սրահից էլ ծագեց փիլիսոփայութեան անունը. յոյ-
ները կոչում էին դորան փիլիսոփայութիւն սրահի
(սրահ յունարէն նշանակում է ստոյեա) ամբողջ 58
տարի վարդապետեց նա իւր այս դպրոցում և խո-
րին ծերութեան մէջ ազատակամ վերջ դրաւ իւր

Ստոյիկեաններն իսկապէս հաստատուն
և անփոփոխ մարդիկ էին իրենց բարեգործ
կեանքով: Սոքա վարդապետում էին թէ
մարդս իւր բարին պէտք է փնտռի այնպիսի
բաների մէջ, ինչ որ իրանից է կախուած.
այսինքն՝ արդարութեան, առ մարդիկն ու-
նեցած բարի դրութեան և հոգևոր մաքրու-
թեան մէջ. իսկ մնացած դործերն ու իրերն
արտաքին են. օրինակ մարդկային կարծիք-
ները, հարստութիւնները, մարմնական կեան-
քը և այլն-իրենը չհամարել. այսու ասում
էին նրանք. անօրինում է Աստուած, իմ
Հայրը, ոչ թէ ես. իսկ իմ դործն է միայն
կամենալ, ցանկանալ այն, ինչ որ նա է կա-
մենում: Գիտութիւնն ինքն ըստ ինքեան
անանց դործնական նշանակութեան աւե-
լորդ և անպէտք բան էին համարում. ամէն
մարդ պէտք է ձգտի իմաստութեան. այսինքն
աստուածային և մարդկային իրերի ճանա-
չողութեան, որպէսզի համաձայն դոցա կեանք

կեանքին Զենոնի կեանքի չափաւորութիւնը հըռ-
չակուած էր հների մէջ. իսկ նրա ժուժկալութիւնն
առակ էր դարձել. այն արձանը, որ Աթէնայիք նրա
մահից յետոյ կանգնեցրին, կրում էր այն նշանաւոր
գովասանքը, թէ Զենոնի կեանքը համաձայն է եղել
իւր փիլիսոփայութեան:

վարէ և այլն: Էպիկտետը շատ խօսեց իւր ուսուցիչներին հետ և խորապէս թափանցեց նոցա վարդապետութեան ուսման մէջ. այնպէս որ այդ մտքերը նրա հոգուն յատուկ դարձան: Նրա համբաւը շատ շուտով տարածուեցաւ ամէն տեղ և ճշմարտութիւն փնտռող, արդարութեամբ ապրել ցանկացող մարդիկ սկսեցին հաւաքուել նրա շուրջը:

Էպիկտետի իմաստալից խօսքերը, պարզութիւնը, ճշմարտասիրութիւնը, քաղցրախօսութիւնը և սրտագին բարխացակամութիւնն ու սղորմածութիւնը դէպի ամէնքը, դէպի բոլոր մարդիկ, հիացրեց, հմայեց ունկնդիրներին: Մինչև անգամ Էպիկտետի մօտ չար դիտաւորութեամբ եկողներն էլ ենթարկուում էին նրա անաչառ և անխոցելի խօսքերին և հեռանում էին մեղմացած կողմ սրտով ու պայծառ մտքով:

Էպիկտետի ունկնդիրներից շատերը բոլորովին թողեցին իրենց առաջուայ յանցաւոր, մոլորուած ու կեղծ կեանքը և սկսեցին ապրել նոր կեանքով և սիւնել ամէնուրեք բարեգործութեան և ճշմարտութեան սերմերը, կարճ ժամանակամիջոցում, չնայելով յիմարների ծաղրին, արհամարհանքին և նախանձոտ մարդկանց լարած որդայթներին,

ստոյիկեան Էպիկտետ այս նոր իմաստասիրի համբաւը տարածուեցաւ հեռու երկրներ աշխարհի ամէն կողմից սկսեցին խմբուել նրա մօտ բազմաթիւ աշակերտներ:

Էպիկտետի ուսուցիչ Մուզօնին այնքան յաջող չէր խօսում, սրքան փայլում էր իւր զարմանալի ազնուութեամբ, բարոյականութեամբ ու շիտակ բնաւորութեամբ:

Էպիկտետն ինքն էլ էր ճշմարիտ բարբիտէր, շիտակ բնաւորութեամբ և անկաշառ, սակայն իւր սիրելի դաստիարակչի օրինակը ևս առաւել ամրապնդեց նրա մէջ այդ առաքինութիւնները: Էպիկտետն ամէնքին էլ հաւասար աչքով էր նայում: Երբէք չի աչխատել ու ցանկացել սրան կամ նրան շողոքորթել կամ սիրտը շահել և ամէնեւին երկիւղ չի կրել ոչ սքից իւր ճշմարիտ խօսքերն արտասանելիս:

Նա ասում էր, մարդ պէտք է ազատութիւնն ամէն բանից թանկ գնահատէ ոչ թէ միայն լսկ խօսքով, այլ գործով: Նա միշտ խորհուրդ էր տալիս մարդկանց փախչել այն ամէնից, ինչ որ կաշկանդել կարող է մեր կամքի ազատութիւնը և այդ պատճառով էլ չէ քաջալերում ինչպէս երգումն, այնպէս էլ անէծքը, նզովքը:

Անազնիւ և անպատիւ մարդու համար, ասում է Էպիկտետը, երգումը և անէծքը անօգուտ են. նա սովոր է մարդկանց խաբել և երգուել, երբէք երկիւղ չկրելով երգումը գրծելուց: Ազնիւ մարդուն պէտք չէ երգումը, որովհետև նա առանց դրան էլ չի կեղծի ճշմարտութիւնը: Ընդհանրապէս երգումը և այլն յառաջացնում է բազմաթիւ չարիքների, կաշկանդում է մարդու միտքն ու խիղճը և յաճախ պարտաւորեցնում է նրան յետագայում գործել այն, ինչ որ հակառակ է Աստծոյ կամքին:

Ներոն կայսեր մահուանից յետոյ Հռովմի գահը բարձրացաւ Դոմիտիանոսը. սա ստակալի կերպով ատում և հալածում էր այն մարդկանց, որոնք յայանի և համարձակ կերպով խօսում և քարոզում էին ճշմարտութիւնը: Սրա հրամանի համաձայն սենատը վճռեց հալածել և ընդ միշտ հեռացնել Հռովմից բոլոր այդ տեսակ մարդկանց: Ստոյիկեան փիլիսոփաներն էլ այդ հալածանքից ազատուելու համար, ստիպուած եղան հեռանալ. գնացողներից ամէնաառաջինն ի հարկէ Էպիկտետը պիտի լինէր: Հռովմում մնացող նրա բարեկամները շատ և շատ ցաւեցին իրենց յարգելի և սիրելի դաստիա-

րակչի բաժանման պատճառով. բայց ինքն Էպիկտետը հաւատարիմ մնալով իւր հասկացած կեանքին, դաւանած սկզբունքին, առանց կորցնելու իւր սովորական հանդատութիւնը կամ սառնասրտութիւնը և հոգեկան ուրախ տրամագրութիւնը, սկսեց մխիթարել իւր աշակերտներին այս խօսքերով. «Բարեկամներ և եղբայրներ, սիրտս չարժւում է դէպի ինձ ունեցած ձեր սըրտադին կապի համար. բայց դրա հետ ինձ տխրեցնում է և այն, որ դուք քիչ թափանցեցիք այն ճշմարտութիւնների մէջ, որոնց մասին մենք յաճախ խօսել ենք. դուք ինձ հետ համաձայնեցիք այն բանում, թէ չպէտք է ցանկանանք այնպիսի բան, ինչ որ մեր իշխանութիւնից դուստ է, մեր իրաւունքի ներքոյ չէ. այլապէս ինքներս մեզ կը ձգենք ուրիշի իշխանութեան, ազդեցութեան տակ. պէտք է ընդհակառակն ի սրտէ անդադար կրկնենք: Տար ինձ Աստուած, ուր կամենում ես. Հռովմ, Հռովմից դէպի բանտ, այնտեղից էլ մահ ... սակայն կտոճեմ ինքս ինձ, շատ ցաւում եմ, որ ինձ չեն թողնում Հռովմում մնալ ... Հռովմը դեղեցիկ է, խօսք չկայ, աւելի անգնահատելի է ընկերների կամ եղբայրների հասարակութիւնը, որոնց

հետ ապրել եմ. բայց սրանցից աւելի գեղեցիկ և ցանկալի է ապրել առանց միտրեւեմտայուզութեան, ալէկոծութեան և ցաւակցութեան. հոգին և ոչ սքի և ոչ մի իրի չենթարկել, չհնազանդեցնել բացի Աստուածանից: Ազատ հոգին ամէն բանից էլ գերազանց է: Եթէ քեզ վիճակուել է տանել մի շարք անյաջողութիւններ, տար քաջութեամբ և համարձակ կերպով, ոչ թէ մտրակի հարուածներից հառաչող և ուժասպառ եղող իշի պէս. այլապէս դու ստրուկ կը դառնաս և նրան ով Հոովմից քեզ քշում հեռացնում է, և միեւնոյն ժամանակ նրան, ով կարող է միջնորդել ու Հոովմում մնալու իրաւունք ստանալ:

Ապրիր ներկայով և բաւականացիր այն ամէնով, ինչ որ քեզ հետ է պատահում. ուրախացիր, երբ յաջողուի քեզ գործով ցոյց տալ այն, ինչ որ դու սովորել և սովորեցրել ես ուրիշներին...: Երբ դու վերջ տաս դժգոհութեանդ, բարկութեանդ, երբ թողնես յուզուելդ, անհանգստութիւնդ, այն ժամանակ իւրաքանչիւր օրը քեզ համար կը դառնայ ուրախութեան կամ տօնախմբութեան օր, որի մէջ դու կը տօնես բարեոյ ներքին յաղթութիւնը չարութեան դէմ»:

Էպիկտետը Հոովմից հեռանալով իրեն համար բնակութեան տեղ ընտրեց Նիկոպոլիս* քաղաքը: Այստեղ էլ սկսեց ուսուցանել շուկաներում և հրապարակներում:

Էպիկտետն ամէնքին էլ բարեհայեցողութեամբ և հաւասար աչքով էր նայում, այնպէս որ այստեղ, հալածանքի մէջ, այնքան հետևողներ ունեցաւ ինչքան և Հոովմի մէջ: Նոքա տեսան, որ ոչ թէ միայն բարի մտքեր է քարոզում ու տարածում, այլ և ինքն անձամբ գործով էլ ապացուցանում է իւր ասածները. այս հանգամանքն ահա էլ աւելի թելադրեց լսողների յարգանքը դէպի նա:

Էպիկտետն ամէնից առաջ աչալընութեամբ զննում էր իրեն և չէր թողնում, որ իւր հոգու մէջ արմատ բռնին սնափառութիւնն ու անձնահաճութիւնն և այլ նման մտլութիւններ:

Նա Սոկրատէսի պէս խոնարհ էր և համեստ. ամէնից շատ հակառակ էր գոռոզութեան և պարծենկոտութեան. թէև ամէնքը նրան ճանաչում էին որպէս մի շատ բարեգործ մարդու, սակայն ինքն իւր մասին վատ

* Նիկոպոլիսը գտնուում է Պանուբ գետի վրայ-այժմեան Բուլղարիայում:

կարծիք ունէր, իւր կեանքի ընթացքում
 իրեն երբէք չի գովել, այլ ընդհակառակը
 միշտ պնդում էր, թէ ոչ մի բարի գործ չի
 արել: Եպիկտետը հակառակ այն մարդկանց,
 որոնք սիրում են միշտ իրենց պակասու-
 թիւններն ու յանցանքները ծածկել, չէր
 ներում, երբ իրեն յանցաւոր էր գտնում
 այս կամ այն գործում և միշտ ուրախու-
 թեամբ լսում էր և խորին շնորհակալութիւն
 յայտնում այն մարդկանց, ովքեր յանդի-
 մանում և մեղադրում էին իրեն յանցանք-
 ների համար: Միշտ պէտք է ճշմարտութեան
 կողմը բռնել, ասում էր նա, աւելի լաւ է
 բոլոր սխալ կարծիքներից հեռանալ և ա-
 պաշխարել վատ վարմունքների համար, քան
 թէ պինդ բռնել մեր սխալ կարծիքները և
 դրանով յաղթուած լինիլ ճշմարտութիւնից:

Նա սիրում էր, որպէս օրինակ, ցոյց տալ
 իւր աշակերտներին Ագրիպպաս անունով մի
 իմաստասիրի, որը թէև բոլորովին անպարտաւ
 և անարատ էր, սակայն երբէք իւր մասին
 ոչ մի գովասանական բան չի ասել իւր կեանքի
 ընթացքում, և կարմրել է իւրաքանչիւր ան-
 դամ, երբ մէկն ու մէկը սկսել է գովել իրեն:

Նա դարձեալ յաճախ յիշում էր մի այլ
 իմաստասիրի, որը իւր արտասանած գեղե-

ցիկ ճառերի համար, երբ գովասանք էր
 ստանում իւր աշակերտներից, ասում էր.—
 Եթէ իմ խօսքերից յետոյ, դուք էլի ժա-
 մանակ էք կորցնում և գովաբանում ինձ,
 այն ժամանակ նշանակում է ես ոչինչ օգ-
 տակար կամ խրատական բան չեմ ասել
 ձեզ...:

Եպիկտետը սիրում էր միշտ ասել.
 «Համբերիր և դպիր քեզ», և իսկապէս նա
 համբերութեամբ և իրեն զսպելով հասաւ
 փառաւոր կատարելութեան և այդ բանով
 նմանուեցաւ հին իմաստուն Ռէօգլինեսին,
 որին ի բոլոր սրտէ խորապէս յարգում էր:

Իւր աշակերտներին յաճախ կրկնում
 էր. «Երբ դուք այնքան բախտաւոր էք, որ
 սովորել էք շատ քիչ բանով բաւականութիւն
 տալ ձեր մարմնին, դրա համար չգոռոզա-
 նաք, եթէ վարժուել էք բաւականանալ մի-
 այն ջրով, դարձեալ չգովաբանէք ձեզ ամէն
 մի յարմար դէպքում, երբ սովորում էք մի
 դժուար գործի, սովորեցէք եզակի կերպով,
 իմաստունի ասածի համաձայն, «Երբ ուզում
 ես վարժեցնել քեզ ինքնազսպութեան կամ
 համբերութեան, այն ժամանակ մի շատ տօթ-
 օր, երբ տանջուում, չարչարում ես ծարա-
 ւից, վերցրու թարմ ջուրը քո բերանի մէջ

և առանց մի կաթիլ անդամ կուլ տալու թափիր. և որ ամէնազլխաւորն է այդ մասին ոչ ոքի և ոչինչ մի ասիր»:

Այդպէս երբէք չաշխատէք մարդկանց դովասանքին արժանանալ. խելացի մարդուն չի վայելում այդպիսի դատարկ սնափառութիւնը:

Էպիկտետն իւր ամբողջ կեանքն անցկացրեց վերջին ծայր աղքատութեան մէջ և երբէք չէր էլ ձգտում հարստութիւն ձեռք բերելու նոյն իսկ կարիքի չափ:

Նա ապրում էր մի շատ փոքրիկ խրճիթի մէջ, որն ոչ միայն փականք, այլ և դռներ չունէր. պէտք էլ չէր զգում պահպանելու իւր բնակարանը ... յարդեայ փռուածքը (տապաստ) փայտեայ նստարանը (թախտ), փսիաթը (խսիր) և կաւեայ ճրագը կաղմում էին նրա ամբողջ կարողութիւնը. մի անգամ նա օգտուում էր երկաթեայ լամպով, որն ընծայ էին բերել, բայց այն էլ նրանից դողացան. այն ժամանակ նա կրկին կաւեայ ճրագի փոխարինեց այն և ժպտալով ասաց. «Եթէ դողը կը մտածի վերստին անգամ այցելել ինձ, կը սխալուի իւր հաշիւներն մէջ»:

Պէտք չէ, ասում է նա, տունը զարդարել, որովհետև դրանով միայն աշխա-

տում ենք ուրիշներին զարմացնել. խելօք մարդը դեղեցկացնում կամ զարդարում է ոչ թէ տունը, այլ իւր հոգին բարութեան և ճշմարտութեան հասկացողութեամբ:

Մէկ անգամ Էպիկտետը խօսեց իւր աշակերտների հետ բարեկամութեան և այն մասին թէ ինչպէս պէտք է խելացի կերպով վերաբերուին միմիանց հետ, և յատկապէս շեշտեց այս մասին թէ, մարդիկ յաճախ սպասում են, որ իրենց մօտ խնդրելու գան, թէև առանց այդ էլ տեսնում են, որ մարդը գտնուում է նեղութեան մէջ, օգնութեան է սպասում ... լաւ չէ այդպէս վերաբերուելը, ասում էր Էպիկտետը. նայեցէք արեգակին. ամէնքին լուսաւորում, տաքացնում է առանց խնդիրքի սպասելու և ուրախ զուարթ դիմաւորում է ամէնքին ... այդպէս և դուք, չսպասէք խնդիրքի, դովասանքի. այլ օգնեցէք մարդկանց բարեացակամութեամբ և կը լինիք սիրելի որպէս արեգակը:

Աշակերտները համաձայնեցին այս սաճների հետ, բայց մէկը նոցանից դարձաւ և ասաց Էպիկտետին — անհա դու խորհուրդ ես տալիս միշտ օգնել մարդկանց, իսկ ինքդ հրաժարուում ես հարստութիւնից, ինչպէս կարող ես օգնել ուրիշներին, երբ

աղքատ եւ: Միւս ընկերները համաձայնեցին իրենց ընկերոջ կարծիքին ...

Խնչպէս սխալում էք, պատասխանեց Էպիկտետը. միթէ կարծում էք ուրիշներին օգնութիւն հասցնելը կայանում է նրան փող տալուն մէջ. ճշմարիտ է, ով հարուստ է նա պէտք է օգնի իւր մերձաւորին կարիքի միջոցին ... բայց շատ դժուար է հարուստ մարդու համար ապրել բարեգործութեամբ. և դժուար թէ բարեգործը փող ունենայ, հարուստ լինի. ես միայն այն ժամանակ հարստութիւն ձեռք կը բերեմ, երբ ցոյց տաք ինձ, թէ ինչ ճանապարհով կարելի է ձեռք բերել, չկորցնելով աղնութիւնն, անկեղծութիւնն և այլն: Եթէ կամենում էք, որ ես ի սէր կեղծ հարստութիւն ձեռք բերելուն կորցնեմ իմ միակ ճշմարիտ հարստութիւնը՝ մաքուր խիղճս, այն ժամանակ նշանակում է թէ փողը ձեզ համար աւելի թանկ է, քան հաւատարիմ, ճշմարիտ և աղնիւ ընկերը, բարեկամը. մտածեցէք և կը հասկանաք ձեր սխալը:

Էպիկտետը համարեա թէ իւր ամբողջ կեանքի ընթացքում ամուրի մնաց և շարունակեց սովորեցնել մարդկանց մինչև իւր կեանքի վերջին օրերն անգամ: Կեանքի մա-

սին ունեցած նրա հասկացողութիւնը մեծ բաւականութիւն էր պատճառում իրեն և չկար նրանից աւելի երջանիկ մարդ և միանգամայն գոհ իւր վիճակից, բախտից, չնայելով որ շատ աղքատ էր և անդամալոյծ. «Մարդկային լեզուն չի կարողանում, ասում էր նա, կատարեալ կերպով շնորհակալութիւն և փառաբանութիւն մատուցանել Աստծուն մեզ պարգևած բարիքների համար. ինչ կարող եմ անել ուրիշներին, անգամալոյծ և ուժասպառ ծերուկս. ինչպէս չփառաբանել անլուելի կերպով այն մեծ Աստծուն, որը պարգևել է մեզ, մարդկանցս այն ամէնը՝ ինչով օգտուում ենք: Եթէ սոխակ լինէի այն ժամանակ կը փառաբանէի Սրարչին սոխակի երգով. բայց խելացի արարած լինելով, ստիպուած եմ փառաբանել նրան մարդկային տկար լեզուով. դրա մէջ է և իմ կեանքի խորհուրդը և ես պէտք է ի կատար ածեմ այդ մինչև իմ վերջին շունչը»:

Էպիկտետն իւր ամբողջ կեանքում հոգւոյ բոլոր ոյժերը լարեց փնտռելու և սովորելու աստուածային սրբանքները և ջանաց ըստ ամէնայնի համակերպել իւր խօսքերը, մտքերը և գործերն այդ սրբանքներին:



Ժամանակի յայտնի և մեծ մարդիկ շատ էին յարգում Էպիկտետին և շատ արիւնցին երբ մեռաւ նա:

Բայց Էպիկտետի նման մարդիկ երբէք չեն մեռնում: Նոցա մասին մի փայլուն յիշատակ միշտ մնում է մարդկութեան մէջ: Նոցա հոգին միաւորւում, խառնւում է այնպիսի յաւիտենական ճշմարտութեանց հետ, որ նոքա ըմբռնել և մարմնացրել են իրենց մէջ և ահա նոցանից յետոյ իւրաքանչիւրը մեզանից, ով ցանկանում է իւր ոյժերի, կարողութեան չափով առաջ գնալ դէպի իսկական ճշմարտութիւնը տանող ճանապարհը, կարող է գնալ իրանից առաջ ամբողջ Էպիկտետի նման մարդկանց դժած շառաւիղների հետքերով և հոգեպէս միանալ նրանց հետ ուրախութեան ու յաւիտենական առանձնութեան մէջ:

Պատմում են, թէ Էպիկտետի մահից յետոյ նրա ծանօթ հարուստներից մէկը, որն ակնյայտնի կերպով ամէնից աւելի շատ էր յարգում նրա հեղինակութիւնը, աճուրդով դնեց նրա կաւեայ ճրագը երեք հազար դրամայով, (մեր փողով 750 ռ.) մի սրախօս լտելով այս, ասաց. այդ հարուստը դուրեք կարծում է, որ եթէ ինքը նստի այդ ճրագի

յոյսի առաջ, կը խելօքանայ և կը փառաբանուի, ինչպէս էր ինքն Էպիկտետը: Բայց բարեբախտաբար Էպիկտետի ոչ բոլոր յարգողները հեռեեցին այդ հարստին. կային և այնպիսիները, որոնք կարողացան դնահատել իրենց ուսուցչին և հասկանալ նրա կեանքի և վարդապետութեան խուհուրդը... մի քանիսը նրանցից, արդէն նրա մահուանից յետոյ դրի առան այն, ինչ որ մտաբերում էին նրա խօսքերից, զրոյցներից, և ահա այդ ձևով հաղորդել են մեզ և անմահացրել նրա մտքերը:

Էպիկտետեան վարդապետութեան յարգողները շարքում կային և հին քրիստոնեաներ, այդպէս օրինակ՝ երանելի Օգոստինոս Էպիկտետի մասին մեծ յարգանքով և համակրանքով է խօսում. Արիզինէս նոյնպէս գրում է, որ իւր ժամանակ քրիստոնեաները շատ սրտազին կերպով հետաքրքրւում էին Էպիկտետի վարդապետութեամբ և այդ իմաստալից խրատներից և հրահանգներից մեծապէս օգտւում էին ու այդպիսով էլ աւելի ամրապնդւում քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութեանց մէջ:

Էպիկտետի վարդապետութեան էութիւնը:

Աստուած կամ ամէն բանի սկզբնապատճառը, որը ստեղծել է աշխարհը և կառավարում է նրան, անվերջ և անսահման բարի է և իմաստուն: Նրա իմաստուն բարեաց ճառագայթները ցոլանում են մարդու գիտակցութեան մէջ. և այդ պատճառով մարդու ճշմարիտ նշանակութիւնը նրանումն է, որ ընդունի և ասեցնի իւր մէջ այդ աստուածային սկզբնաւորութիւնը և աշխատի նմանուիլ Աստծուն: Դրան հասնելու համար մարդ պէտք է կարողանայ ճանաչել բարին և չարը: Բարին է այն ամէնը, ինչ որ բարձրացնում, հարստացնում է մեր միտքը կամ մտաւոր կարողութիւնը, ուրեմն և լուսաւորում մեր ճանապարհը. այն ամէնը, ինչ ընդհակառակը խոնարհեցնում, ցածրացնում ու ստորացնում է մեր միտքը և մթնացնում մեր ճանապարհը, է չարը կամ չարիքը: Բարին և չարը մարդու համար յառաջ են դալիս դէպի իրեն և դէպի ուրիշն ունեցած յարաբերութիւնից. բարիքը մեզ համար

է այն ամէնը՝ ինչ որ բարձրացնում է. իսկ չարը կամ չարիքն այն ամէնը՝ ինչ պակասեցնում, փոքրացնում է մեր մէջ աստուածային պատկերը: Առ մարդիկն ունեցած բարիքն է ցանկանալ ուրիշներին բարիք. չարը կամ չարիքը՝ փառքի ցանկութիւն իւր անձի համար: Որպէսզի մարդ կարողանայ բարիք գործել և խոյս տալ չարութիւնից, պէտք է ազատ լինի. ազատութիւնն էլ ձեռք է բերւում միայն այն ժամանակ, երբ մարդ դառնում է անկախ արտաքին և բոլոր պարագաներից. իսկ առ ինքն ունեցած ներքին կեանքի յարաբերութեան նկատմամբ մարդ միշտ ազատ է. որովհետև կարող է կռուել իւր յանցանքների և մոլութիւնների դէմ, կարող է սանձահարել իւր ցանկութիւնը և անել այն, ինչ որ կը թելադրի իւր խելքը և այլն:

Էպիկտետի առանձին մտքերն աւելի պարզ մեկնաբանւում են հետեւեալ զրոյցների մէջ:

ԷՊԻԿՏԵՏԻ ԶՐՈՅՑՆԵՐԸ

I

Սիրելի բարեկամին

Սիրելի բարեկամ, առաջ քո ցանկութիւններն անկեղծ էին, հասկացողութիւնդ պարզ, յստակ և արարքներդ բարի. դու կարգում էիր իմաստալից դրքեր և ուրախանում, ցնծում էիր Սոկրատէսի և Գիօգլինէսի նման մարդկանցով. իսկ այժմ ուրախանում ես քո այն բարեկամներով, որոնք քեզ դէպի անառակութիւն են առաջնորդում, անբարոյականացուցիչ դրքեր են կարգում և քո խօսքերն ու դորձերն ամօթալի են... սխալում ես, սիրելի բարեկամ, դու կորցրել ես ամէնից կարևորը. չլինի թէ մտածում կամ կարծում ես, որ կորուստները միայն նիւթական են լինում: Այ, կան աւելի վատ կորուստներ, հոգեկան կորուստներ՝ պարզ և մաքուր միտք, լաւ ցանկութիւններ, բարի վարք և այլն. այժմ դու այդ ամէնը չէս տեսնում, որովհետեւ մոլորուել ես: Յիշիր, իմ թշուառ բարեկամ և փրկիչ քեզ հէնց ամէնից առաջ քեզանից. եթէ ինձ հետ մի օրեկից դժբախտութիւն պատահէր,

չէ որ կօզնէիր ինձ. ինչո՞ւ քեզ չպիտի օգնես, մանաւանդ որ այդ անելու համար չպէտք է ոչ սքի ոչ ձանձրացնես, ոչ ծեծես, ոչ էլ սպանես. պէտք է միայն մտածես, խորհես և խօսես ինքդ քեզ հետ. դու քեզ աւելի սիրով և ուրախութեամբ կը լսես քան ուրիշներին. լսիր ուրեմն քո խղճի ձայնին և քո խելքին. զննիր ինքդ քեզ ինչպէս որ պէտք է. մի նմանուիր փոքրօգի լուզորդներին, որոնք դեռ դեռի հասանքի դէմ կռուել չկարողանալով, համարձակում են ծովի մէջ նետել իրենց: Ըմբռնիր, որ խոհեմութեամբ կառավարուելը շատ հեշտ է. հարկաւոր է միայն լաւ ապրել ցանկանալ, այն ժամանակ ամէն բան իւր կարգին կերթայ. եթէ դու շարունակես ապրել այնպէս ինչպէս մինչև այժմ ես ապրել, բոլորովին կը կորցնես քո ուշիմութիւնը և կենդանուց աւելի վատ կը լինի ահա՛ արի կեանքն ինչ օգուտ կը բերի, կը հարցնես դու, մի՞թէ քիչ օգուտ է երբ կարգապահութիւնն անկարգութեան, ազնւութիւնն անազնւութեան, չափաւորութիւնը զեղխութեան, հոգու մեծարանքը, պատիւն անարգանքի, աշխատարհանքի փոխարէն պինդ բռնենք և նրա մէջ հաստատուենք: Հասկացիր այս ամէնը, զգուշացիր և հոգիդ փրկիր...:

Փոքր գիր բարեկամին

Իմ բարեկամ, դու իզուր հոգեպէս ընկնում, ցածրանում և թերահաւատում ես Աստուծոյ նկատմամբ: Երբ մարդկային մի որևիցէ ստեղծագործութիւն ենք տեսնում, համոզուած ասում ենք, որ այդ մարդու գործ է: Ճիշտ այդպէս է և մեր արարած աշխարհը. նա էլ ունի իւր արարիչը, ստեղծողը. ամէն բանի սկիզբը, բոլոր պատճառների պատճառը, հոգևոր, առարկայական կամ նիւթական աշխարհի Հօրը կոչում ենք Աստուած. նա ով հասկանում է որ մեր շուրջը, աշխարհում ամէն բան աստուածային տնօրէնութեամբ է կատարւում, եթէ միայն ընդունակ է շնորհակալութիւն յայտնելու, անպատճառ շնորհակալ կը լինի Աստուծուց, աշխարհում երևացող այն բոլոր երախտեաց և շնորհների համար, որոնցով մարդիկ շրջապատուած են: Միայն անխեղ մարդը չի հասկանում, տեսնում այն ամէնը, ինչ որ գտնւում է իւր շուրջը և շնորհակալ չէ Աստուծուց, որ նա այդ աստիճան փառաւոր

և իմաստուն կերպով է կարգաւորել, ստեղծել աշխարհը: Եւ իրօք զէպի որ կողմը նայում ենք, ինչ որ տեսնում ենք մեր շուրջը, նոյն խոյ մեր մէջ և այլն, ստիպում, հարկադրում են մեզ խոնարհուել ամէնակարող Աստուծոյ առաջ. օրինակ. ի՜նչպէս իմաստուն կերպով կարգաւորուած է կնոջ և մարդու հողեղէն մարմինը, որոնց փոխադարձ ձգողականութիւնից առաջ են դալիս սերունդներ, տոհմեր. ի՜նչպէս հրաշալի կերպով կարգաւորուած է կենդանական և բուսական կեանքը և այլն: Սակայն մարդուն, քացի այն կեանքից ինչպիսին դրուած է կենդանիներին և բոյսերին, պարզեւուած է դարձեալ մի ուրիշը: Մարդիկ և կենդանիները ստեղծուած են տարբեր կերպով, որովհետեւ նրանց կոչումը, նշանակութիւնը և տարբեր է. ընտանի կենդանիները ծառայում են մարդուն. մի քանիսն օգնում են երկիրը, հողը մշակելու, ուրիշները կաթ են տալիս և այլն. նոքա կատարում են իրենց պարտականութիւնները, ամէնևին չհասկանալով թէ ինչ և ինչու համար են կատարում և կամ ինչ է կատարւում աշխարհի մէջ: Սակայն մարդկանց տուած է ընդունակութիւն քննելու շրջապատող իրերը, հաս-

կանալու թէ ինչո՞ւ համար է կատարուումը պէտքը կարողանամ համակերպուել կեանքի այդ ամէնը և տեսնելու Աստուծոն իւր իսկրատահարներէ հետ ...» Բայց դու ընդհատեղ ծագործութիւնների մէջ:

Մարդս, ինչպէս և կենդանին, պէտք է պատահում. ամստսում և լաց ես աշխատի, չարչարուի իւր մարմնի կարիքներէ լինում, երբ պատահում է այն, ինչ որ չես համար. բայց ամէնից աւելի, նա պէտք է իրում, չես ցանկանում և անիծում ես քո կատարէ և այն ամէնը, ինչ որ վերապահ-բախտը, ճակատագիրը ... բախտն էլ այդպէս ուած է միայն իրեն և որով բաժանուում է կարգաւորել, որ դու կարողանաս հասկատարբերում է կենդանուց. մեծ ամօթ էալ, բմբունել կեանքի խորհուղը. և եթէ այն մարդու համար, ով բաւականա-ցանկանում ես համբերել և սիրել, այն ժանում է իւր կենդանական կեանքով և մուս-մանակ, ոչ որ չի կարող խանգարել քեզ այդնում միանգամայն մարդկային հոգևոր կբանում. բայց բանից ինչ է դուրս գալիս. մտաւոր կեանքը: Աշխատիր, իմ բարեկամ չնայելով որ ստացել ես հոգեկան այդպիսի մեռնելուց առաջ կատարել, իրագործել այդ կարող ընդունակութիւններ, չես դանձում պարտականութիւնը: այն քո կեանքի համար. դու ժամանակ ես

Ամէն մարդ ունի հասկացողութիւն ճակորցնում, լաց ես լինում, հեծում, հառա-նաչելու թէ ով է ինքը և ինչո՞ւ համար էսում ես կամ ամէնեին չես մտաբերում ծնուել. Աստուած ամէնքիս էլ պարզեւել է Աստուծոն և կամ կշտամբում, մեղադրում հոգեկան ամէնալաւ ընդունակութիւններ, ես նրան: Սակայն իմացիր, որ դու խելօք հասկացողութիւն, արիւթիւն, հեղութիւն, և բարեգործ կեանք վարելու բոլոր միջոց-խանարհութիւն և այլն: Ըմբռնիր, հասկացիր ներն ունիս, որոնցով և բարձր պիտի կանգ-այդ ամէնը. լաւ նայիր քո ոյժերի և ընդունես կենդանիներից:

նակութիւնների վրայ ու ասա քո հոգուն. «Ուղաշիկեր կամ տուր ինձ Տէր այն ամէնը, ինչ որ Դու ես կամենում. այսպիսի կարողութիւններ, շնորհներ ես պարզեւել ինձ,

III

Ինչպէս պէ՛սք է կոուել արասաւոր ցանկութիւնների դէմ:

Ամէնքը գիտեն, որ իւրաքանչիւր մասնավորութիւն կրկնուելուց ուժեղանում է ամրապնդւում է. օրինակ որպէսզի մարդ լաւ քայլել կարողանայ, պէտք է յաճախ ելալ շատ քայլէ. որպէսզի կարողանայ լաւ վազել, պէտք է յաճախ ելալ շատ վազէ. որպէսզի կարողանայ լաւ կարգալ, պէտք է շատ կարգալ եւ այլն: Ընդհակառակն, եթէ անուշադիր թողնենք այն ինչի մէջ վարժուած, ընտելացած ենք, այն ժամանակ նոյն խնդիրը սովորութիւնը կամաց կամաց կը մոռացուի. եթէ օրինակ պառկես տասն օր առանձնաբար վեր կենալու եւ ապա վեր կենալու սկսես քայլել, կը զգաս որ ոտներդ բաւականին թուլացել են: Ուրեմն եթէ ցանկանում ես վարժուել մի օրեւիցէ գործի, պէտք է յաճախ ելալ շատ անգամ կրկնես եւ ընդհակառակը, եթէ ուզում ես թողնել քո վաստակները, ինչի նկատմամբ էլ ուզում ես լինի, այն ժամանակ մի կրկնի այլևս Միև

նոյնը կատարում է մեր հոգեկան ընդունակութիւնների հետ. երբ բարկանում ես, իմացիր որ միայն մի յանցանք կամ չարիք չես գործում, (ընդհանրապէս բարկութիւնը յանցանք է) այլ եւ դրա հետ ուժեղացնում ես քո բարկութեան կամ զայրոյթի սովորութիւնը. դրանով միայն վայտը դարձում ես կրակի վրայ: Եթէ ենթարկուել ես մարմնական դայթակղութեանց, չմոռանաս որ յանցաւոր ես միայն այդ բանում. ոչ, հասկացիր որ միևնոյն ժամանակ ուժեղացնում ես քո դէպի կրքոտ արարմունքները տանող սովորութիւնը: Ամէն մի խելացի մարդ կասէ քեզ, որ հոգեկան տկարութիւնները, ցաւերը, մեր չար մտքերը, ցանկութիւններն եւ ուժեղանում են:

Եթէ հիւանդը բոլորովին չի առողջացել, շատ հեշտութեամբ կրկին անգամ կը հիւանդանայ, քան այն մարդը, որը երբէք հիւանդութեամբ ոչ չարչարուել եւ ոչ էլ տանջուել է եւ այլն. նոյնը պատահում է եւ մեր հոգեկան հիւանդութիւնների հետ, որոնցից յետոյ մնում են վէրքեր, որ պէտք է առողջացնել բոլորովին. հակառակ դէպքում եթէ նորից խփեն նոյն վիրաւորուած տեղին, վէրքը կրկին կը բացուի եւ աւելի ու աւելի

կը սկսի ցատել: Եթէ չես կամենում վար ժեցնել քեզ բարկութեան, ըստ ամէնայն զսպիր և մի թողիր որ նա ածի, զարգանայ Բարկութեան դէմ կռուել ամէնից աւել հեշտ է հէնց սկզբում: ահա այդ ժամանակ կանդնեցրու քեզ . հաշուիր այն օրերը, երբ ամէնեկն չես բարկացել և կը տեսնես ակն յայտնի կերպով, որ քո ուղղուելն առաջ շարժուում, մի քանի ժամանակից յետոյ կասես քեզ, ահա առաջ բարկանում էի ամէն օր, իսկ այժմ՝ բարկանում եմ միայն երկու օրը մի անգամ, եթէ այսպէս համբերու լինեմ և առաջ գնամ, այն ժամանակ կը բարկանամ միայն երեք օրը մի անգամ յետոյ հինգ օրը մի անգամ և այլն, և եթէ դու վերջապէս կարողացար յաջորդաբար ամբողջ երեսուն օր առանց մի անգամ և բարկանալու սպրել, փառք տուր և շնորհակալ եղիր Աստուածանից:

Ճիշտ նոյն կերպով էլ կարելի է իւրաքանչիւր սովորութիւն աստիճանաբար թուլացնել և ապա ամբողջովին թողնել, դէպքեր:

Եթէ ինքդ կարողացար քեզ ասել, ահա մի ամբողջ օր է որ չեմ ընկճուել հողւոյ, ահա երկու օր է, յետոյ ահա արդէն երկու

ամիս է, երեք ամիս է որ ես աչալը ջութեամբ, ուչադը ջութեամբ եմ նայում ինձ, երբ նոյն իսկ ցաւի, վշտի դէպքեր են պատահում... Եթէ կարող ես ասել այդ, նշանակում է քեզ համար ամէն բան յաջող է ընթանում: Բայց մտքերի կռուի մէջ ինչ միջոցով է ձեռք բերում, վաստակում այդպիսի ոյժը, արդար եղիր քո սեպհական խղճի, Աստուծոյ առաջ, և եթէ կը հակուես դէպի այս կողմը, դու վանած, հեռացրած կը լինիս քո վատ յանցաւոր մտքերը:

Որպէսզի մեզ գայթակղեցնող մտքերից որքան կարելի է շուտ ազատուենք, պէտք է աշխատենք մտնել բարեգործ, լաւ մարդկանց շրջանի, հասարակութեան մէջ:

Երբ առաջին անգամ քո մէջ մի չար միտք է յղանում, ամէն ջանք գործ դիր և հալածիր նրան, կռուիր նրա հետ և ասա . սպասիր մի քիչ միտք ... թող որ հասկանամ, իմանում թէ ո՞վ ես դու և ինչո՞ւ համար ես չեղում, խոնարհեցնում ինձ. թող որ քեզ դատեմ, քննեմ ... յետոյ նրան մի թողիր աւելի առաջ գնալ—հասկացիր թէ ինչ հետեանք կունենայ եթէ ենթարկուես այդ գայթակղեցուցիչ մտքերին. եթէ ենթարկուես չարութեան, նա քեզ կը հրապուրի

V

Բարեգործութիւնը կորուս չէ.

Չասես թէ փաստուեցի, երբ փոխեալ էջը ձիւս, ոչխարը եղան, փողը բարի գործի, գատարկ վէճերը խորհրդաւոր լուծեան հետ, այդպիսի դէպքերում աւելի ես օգտուում քան փաստում: Եթէ այդ չես հասկանում, չես հասկանում և քո բախտաւորութիւնը, երջանկութիւնը: Նաւափարն աւելի հեշտութեամբ կը խորտակէ նաւը, քան կը պահպանէ մի վտանգաւոր տեղում . մանրագոյշ շարժումը կարող է խորտակել նաւը այդպէս է և մեր կեանքը . նայիր դէպքում ամէն կողմ, աշաւուրջ եղիր և խելօք, այժմանակ կը պահպանես այն, ինչ որ ամէնակարեւորն է աշխարհիս վրայ՝ այն է ազատութիւնը ... Եթէ կորցնես այդ ազատութիւնը, ի տրիտուր ոչինչ չես ստաննոյն արժողութեամբ:

Մտածիր այսպէս . թող ուրիշը ձեռքերի հարստութիւն, իշխանութիւն և այլ իսկ ես իմաստութիւն, ցանկանում եմ ազատ լինել, այսինքն մօտիկ բարեկամ, սիրելի

Աստուծոն, ցանկանում եմ յօժար կամքով ենթարկուել Նրան... Եթէ Աստուած ցանկանար, որ մարդիկ հարստութեան, իշխանութեան մէջ գանձին իրենց բաւականութիւնը, երջանկութիւնը, այն ժամանակ այդպէս էլ կը կարգաւորէր . բայց դրանցով մարդիկ ոչ միայն չեն բաւականանում, փառաւորւում, այլ չարչարւում, տանջւում և այլն. նշանակում է, Աստուած դրանց մէջ չէ նշանակել մեր բարին. ահա դրա համար չեմ դադարի նրա հրամանները լսելուց. կը պահպանեմ իմ բարեգործութիւնը, իսկ մնացածները, ինչ որ տրուած է ինձ, կը հարստացնեմ, կաճեցնեմ այն չափով, ինչ չափով պահանջում է իմ մտքը, իմ բանականութիւնը:

VI

Ինչո՞ւ համար են մարդիկ վրդովուում, անհանգիստ լինում:

Երբ տեսնում եմ մի որեւիցէ մարդու լուրւում, տանջւում, անհանգիստ է լինում, հարցնում եմ ինձ, ինչ է ուղում այս անբախտ մարդը. անկասկած նա ուղում է այն

պիտի մի բան, որը իւր իշխանութեան, իրաւունքի ներքոյ չի գտնուում, ուստի և չի կարողանում կարգադրել այնպէս, ինչպէս ինքն է կամենում. որովհետեւ այն, ինչ որ իմ իրաւունքի ներքոյ է, չի կարող անհանգիստ անել ինձ, ուղղակի կանեմ, կը կարգադրեմ այն, ինչ որ ցանկանում եմ:

Նայիր, օրինակի համար, այն մարդուն, որը երգում կամ նուագում է տաւիղի վրայ, երբ նա ինքն իրեն է երգում, նուագում, առանց մի օրեկից ունկնդրի, անհանգիստ չի լինում, չի շփոթւում. բայց նայեցէք նրան այն ժամանակ, երբ երգում, նուագում է հոծ բազմութեան ներկայութեամբ. ի՞նչպէս չարչարում, տանջում է իրեն, ի՞նչպէս սպիտակում և կարմրում է, ի՞նչպէս արագ և ոյժեղ է խփում նրա սիրտը ... ինչո՞ւ համար որովհետեւ չի ցանկանում այնքան լաւ երգել նուագել ինչքան մարդկանցից գովասանք ստանալ. բայց այս ակնյայտի կերպով կախուած է ոչ թէ իրանից, այլ լսողներից. և ահա նա տանջւում, չարչարւում է նրա համար, ինչ որ իւր իշխանութիւնից, իրաւունքից դուրս է, ինքը չի կարող կարգադրել հրամայել որ իրեն գովեն, սակայն գովասանք ստանալու համար տանջւում, չարչար

ւում է իրեն բոլորովին ի գուր տեղը, անհանգիստ է լինում ոչ թէ նրա համար, որ վատ է երգում, նուագում, ոչ. նա ինքը շատ լաւ է իմանում իւր գործը. անհանգիստ է լինում ոչ թէ իւր գործի, այլ մարդկային գովասանքի պատճառով և այլն:

Նա տանջում, չարչարում է իրեն, որ թանկացնի այն, ինչ որ ամէնևին թանկ չէ. նա գեռ չգիտէ, որ մարդկային էժանագին գովասանքները չարիք են միայն. չարիքը դրսից չի գալիս. նա մեր ներսն է, հետևաբար մարդիկ կարող են նրանից ազատուել: Երբ ցանկանում ես գովասանքը, այսինքն այն, ինչ որ քեզ ամէնևին պէտք չէ և երես ես դառնում, փախչում ես այն ամէնից, ինչից փախչել անկարելի է, այն ժամանակ քո ցանկութիւնը, կամքը խանգարւում, հիւանդանում է ճիշտ այնպէս, ինչպէս մարդիկ տանջւում են լեարդի և ստամոքսի հիւանդութեամբ ... կամքի այսպիսի խանգարմամբ են վարակուած այն ամէն մարդիկ, որոնք անհանգիստ են լինում իրենցից անկախ պատճառներից և ազագայի յոյսերից:



Խելացի ապրողն ազատ է աշխարհային
ալիկոծութիւններէց։

Մարդիկ միայն այն ժամանակ են չար-
չարուում, ալիկոծուում, երբ զբաղուում են
արտաքին, իրանցից բալորովին անկախ գոր-
ծերով։ Այդպիսի դէպքերում նորա ալի-
կոծուում և հարցնում են իրենց—ես ի՞նչ
պէտք է անեմ. ի՞նչ կը լինի, ի՞նչ դուրս կը գալ
այս բանից և այլն. այսպէս է ասում այն
մարդը, ով ճշմարտապէս աշխատում է ձեռք
բերել այն, ինչ որ իրեն չի պատկանում։
Ընդհակառակն այն մարդը, որը զբաղուում է
անմիջապէս իրանից կախումն ունեցող գոր-
ծերով, ոչ անհանգստանում և ոչ էլ յուզ-
ւում է. իսկ եթէ նա ևս սկսում է թերա-
հաւատել, անհանդիստ լինել ասելով թէ,
կը յաջողուի՞ արդեօք միշտ արդարութեան
կողմը բռնել, արդար լինել և փախչել կեղ-
ծութիւնից, այն ժամանակ կասեմ՝ նրան—
Հանգստացիր, այն ինչ յուզում է քեզ,
գտնուում է քո սեպհական ձեռքերի մէջ.
հետևիր քո մտքերին և գործերին— և ու-

շաղթութեամբ, աշաղջութեամբ և հեռա-
տեսութեամբ աշխատիր ըստ ամէնայնի ուղ-
ղել քեզ։ Եթէ այս մարդը սկսէ երկմտիլ
թէ կը հասնի՞ արդեօք լաւ հետևանքի և չի՞
ընկնի այնպիսի մի կեղծիքի մէջ, որից նա
ուզում է փախչել, ես ամէնից առաջ կը
դրկէի նրան և ճակատը կը համբուրէի, յատ-
կապէս նրա համար, որ դէն է ձգել իրանից
այն ամէնը, ինչ որ վատ է, ինչ որ դայթակ-
ղեցուցիչ է. իսկ յետոյ կասէի.— Եթէ ուզում
ես միշտ ստանալ քո ցանկացածը կամ ինչ
որ առհասարակ ցանկալի է, ոչ մի անգամ
չենթարկուես նրան, ինչից փախչում ես, մի
ցանկանար այն, ինչ որ քոնը չէ, և մի փախ-
չիր նրանից, ինչ որ քո իշխանութեան, իրա-
ւունքի ներքոյ չէ. լաւ և վատ կեանքով ապ-
րելը մեզանից է կախուած. ոչ ոք չի կարող
խանգարել քեզ, եթէ ցանկանաս ամէն բանի
նկատմամբ էլ վերաբերուել ճշմարտութեան
և բարութեան համաձայն, երբէք չասես
այս բանը կը լինի, մի բան դուրս կը գոյ.
Ինչ որ պատահի կամ չպատահի դու վերա-
դրիր քո օգտին և այլն. . .

— Բայց եթէ ես մեռնեմ խոչնդօտաների,
թշուառութիւնների դէմ վարած կուում, . .

Ի՞նչ է որ . . այդպիսի դէպքում կը մեռ-

նես ազնիւ մարդու մահով, կատարելով այն ամէնը, ինչ որ պարտական էիր կատարելու.. միևնոյն է վերջ ի վերջոյ պիտի մեռնես և մահը սրտեղից որ է պէտք է դանդ ընդ, ես գո՛հ կը լինէի, եթէ մահը դանդէր ինձ մարդու համար պատուաբեր բարի և մարդկանց օգտակար գործի մէջ. կամ թէ նա դանդէր ինձ մի այնպիսի ժամանակ, երբ ես ամէն ջանք գործ եմ դնում ինձ ուղղելու. ահա այն ժամանակ, կարող եմ ձեռքբերս բարձրացնել դէպի երկինք և ասել. «Տէր, Քեզ յայտնի է ամէն բան ... շեղուել եմ արդեօք Քո օրէնքներէից, իմ պարտականութիւններէից ... չնորհակալ եմ Քեզանից նրա համար, որ ծնուել եմ Քո բոլոր պարգևների համար. ես օգտուել եմ նրանցից բաւականաչափ. նրանց յետ վերցրու և կարգադրիր ինչպէս Դու ես ցանկանում, որովհետեւ բոլորն էլ Քոնն է»:

VIII

Խնիօք մարդը հետ կապրի:

Խնիօք և անխելք մարդու տարբերութիւնը նրանումն է, որ անխելքն անդադար ալէկոծւում, ցաւում է այն բանի համար,

ինչ որ իւր իրաւունքի ներքոյ չէ. օրինակ իւր երեխայի, հօր, եղբօր, իւր գործերի և իւր կարողութեան համար: Իսկ խելօքը ընդհակառակը..:

Մեր կեանքի մէջ ոչ մի դժուարութիւն չենք քաշի, եթէ շատ լաւ հասկանանք մեր անելիքը. եթէ հասկանանք այնպէս ինչպէս որ պէտք է, այն ժամանակ նրանք ոչ մի դժուարութիւն չեն ներկայացնի:

Երբ փոքրիկ մանուկը քայլելիս անդիտակցաբար ոտը քարի է կպցնում ու սկսում լաց լինել, դայեակը երեխային հանգստացնելու մտադրութեամբ ձեռում է քարը. և երեխան կարծէք թէ հանգստանում է .. հարուստ ընտանիքներում էլ, երբ պատահում է որ ծառաներն ուշացնում են մանկան ճաշը, մեծերը սկսում են հայհոյել ծառաներին. փոխանակ իրենց երեխաներին մի քիչ համբերութիւն սովորեցնելու. և այլն: Յաճախ և մենք, չափահասներս վերաբերւում ենք մեզ հետ նոյն կերպ, ընչպէս այս անբարեխիղճ դայեակներն ու դատտարակները: Երբ ընկնում ենք մի սրիիցէ անյաջողութեան, անպատեհութեան և դժուարութեան մէջ, այն ժամանակ մենք էլ մեղադրում ենք կամ ուրիշներին, կամ անի-

ծում մեր բախտը .. և այն, մեզանից անկախ
պատճառ համարում, փոխանակ մեր մէջ
փնտռելու իսկական պատճառը:

IX

Խելօք մարդն ամէն բանում էլ կարող է
իրեն համար օգտակար բան գտնել:

Խելօք մարդն ամէն բանում կարող է
իրեն համար օգուտ փնտռել. չկայ այնպիսի
դէպք, երևոյթ, որից նա չօգտուի, մի խրա-
տական բան չսովորի:

— Ի՞նչ օգուտ է տալիս նա ով հայհո-
յում է ինձ:

Այն օգուտը, որ եթէ կամենաս կարող
ես համբերութեամբ տանել նրա հայհոյեան-
քը, ուրեմն և սովորել համբերութեան:

— Իմ հայրը շատ չար է. ի՞նչ օգուտ
կարելի է ստանալ:

Նա չար է իրեն համար, քո նկատմամբ
նա բարի է որովհետև վերստին դու սովո-
րեցնում ես քեզ համբերութեան, հեղու-
թեան...:

— Դէ լաւ, ի՞նչ օգուտ կը բերի ինձ
հիւանդութիւնը:

Հիւանդութիւնը մի շատ լաւ դէպք է
ցոյց տալու դործնականապէս, թէ ինչ է
նշանակում մարմնի հիւանդութիւն մեր հո-
դերը կեանքի նկատմամբ:

— Իսկ մահը, մի թէ նա ևս օգտակար է:
Կարող ես մեռնելով ցոյց տալ ինձ և
մարդկանց, որ մահը քեզ վրայ ոչ մի իշ-
խանութիւն չունի. կարող ես, երբ դէպքը
բերէ, մեռնել ճշմարտութեան համար և
դրանով ուրիշների մէջ էլ աւելի ամբաստան-
դել ճշմարտութիւնը:

X

Շարունակ սրտնչալը, գանգասուիլն
անմտութիւն է:

Երբ նկատես որ սկսել ես կշտամբել
Աստծուն, այն ժամանակ ուշադրութեամբ,
ուշիմութեամբ դիտիր, քննիր այն, ինչի
համար որ անբաւական ես և կը տեսնես,
որ այնպէս էլ պէտք է լինէր և այլ կերպ
լինել չի կարող:

— Բայց մի թէ, օրինակի համար, ար-
դարացի է, որ ահա այս անազնիւ մարդն
աւելի փող ունենայ քան ես...:

Բողոքովին արդարացի է, որովհետև նա փսղի համար աւելի շատ է չարչարուել, հոգացել քան դու. նա խաբել է մարդկանց, կողոպտել է թշուառներին, ամբողջ գիշերներ անքուն է մնացել և անդադրում կերպով աշխատել է դրա համար որպէսզի ապրի ... Ինչո՞ւ համար ես զարմանում. բայց նայիր տես, ո՞վ աւելի խելք ու խիղճ ունի. դ՞ու թէ նա, և կը տեսնես, որ աւելի ունիս այն, ինչի համար աւելի հոգացել, աշխատել և զգուշութեամբ պահպանել ես, այն է քո պատիւը, քո խիղճը .. Իսկ նա վաճառել և ստացել է դրա փոխարէն իւր փնտռած վառքը՝ փողը, հարստութիւնը:

Բայց չէ՞ որ անագնիւ կերպով հարցստութիւն ձեռք բերողը չի կարող բախտաւոր կոչուել, որովհետև գիտենք, իմանում ենք թէ ինչու՞մն է իսկական բախտաւորութիւնը, գիտենք, որ Աստուած արդարադատ է և տալիս է այն, ում ինչ պէտք է: Մաքուր խիղճը միթէ աւելի լաւ չէ հարստութիւնից:

Միշտ յիշիր բնութեան անփոփոխ օրէնքը, ո՞վ ինչ բանի ընդունակ է, նոյն բանում էլ աւելի յաջողութիւն է ունենում — յիշիր այս և այն ժամանակ դու ոչ մի բանի համար չես տրանջայ, չես դանդատուի:

— Լա՛ւ, բայց ի՞նչպէս չդանդատուեմ, երբ կլինս շատ վատ է վերաբերում ինձ հետ:

Այդտեղ ևս դանդատուելու, դժգոհելու ոչինչ չկայ. երբ կը հարցնեն քեզ այդ մասին, ասա միայն, որ կլինս շատ վատ է վերաբերում ինձ հետ, ուրիշ ոչինչ:

— Հայրս էլ ինձ ոչինչ չի տալիս:

Գրանում էլ մի առանձին բան չկայ, բացի այն, որ քո հայրը քեզ ոչինչ չի տալիս:

Խօսելով այդ տեսակ խնդիրների մասին, երբէք չասես թէ դրանց մէջ չար բան կայ, որովհետև կը սխալուես .. խելք մարդը երբէք և ոչ մի բանի համար չի դանդատուի, չի տրանջայ, որովհետև նա շատ լաւ հասկանում է, որ մեր իսկական վիշտը, ցաւը ծագում է ոչ թէ նրանից, ինչ որ պատահում է մեզ հետ, այլ որ մենք անխելք, անմիտ կերպով ենք մտածում պատճառների նկատմամբ:

Հեռացնենք ուրեմն մեր վատ մտքերը և միշտ գնանք բարութեան, արդարութեան ճանապարհով:

XI

Քո բախտաւորութիւնը մի փնտռիր այն բա-
նում ինչ որ քո իշխանութեան ներքոյ չէ:

Եթէ մարդիկ չարիք են գործում, այդ
չարիքը հէնց իրենց համար են գործում. քո
անձի դէմ ոչ ոք չարիք չի կարող գործել.
Դու ծնուել ես ոչ թէ նրա համար, որ չա-
րիք ստեղծես ու յանցանք գործես մարդ-
կանց դէմ, այլ որպէսզի օգնես նրանց բարի
գործերում և դրանում էլ գտնես քո իս-
կական բախտաւորութիւնը:

Իմացիր, եթէ մարդ անբախտ է, ինքն է
այդ բանում մեղաւոր, որովհետև Աստուած
ստեղծել է մարդկանց հէնց իրենց բախտա-
ւորութեան և ոչ թէ անբախտութեան հա-
մար. ինչ որ Աստուած տեսանելի է դարձ-
նում մեզ այս կեանքում, նրանց մի մասը
դրել է մեր լիազօր իշխանութեան ներքոյ.
Իսկ միւս մասը ոչ .. այն, ինչ որ ուրիշները
կարող են վերցնել մեզանից, մերը չէ. և ընդ-
հակառակն ինչ որ չեն կարող խլել, այն է
մեր սեպհականութիւնը: Աստուած իւր բա-
րեքներից տուել է մեզ որպէս սեպհականու-

թիւն հէնց այն, ինչ որ կոչում ենք իսկա-
կան բարիք. նշանակում է Աստուած մեր
թշնամին չէ. նա վերաբերուել է մեզ հետ
այնպէս, ինչպէս բարի հայրը կարող է վե-
րաբերուել. չի տուել մեզ միայն այն, ինչ
որ չի կարող տալ մեզ ինքը բարիքը:

— Այդ այդպէս է, բայց ահա ես ստի-
պուած եղայ բաժանուել իմ ընկերօջից և
մենք երկուսս էլ շատ ցաւեցինք:

— Ինչո՞ւ համար քո ընկերը համարում է
իւր սեպհականութիւն այն, ինչ որ ամե-
նեկն իրենը չէ: Աստուած քեզ նրան չի
տուել որպէս յաւիտենական սեպհականու-
թիւն...:

Երբ դուք միասին էիք, ինչո՞ւ համար
էր մտացել, որ կարող է պատահել գնաս
կամ մեռնես. նա ստացել է իւր արժանի
պատիժը: Իսկ դու ինչո՞ւ այդպէս թեթե-
կերպով ես մտածում, ի՞նչ .. դու պէտք է
ապրես այնտեղ, որտեղ քեզ համար ցան-
կալի է, նոյն երկրում, նոյն մարդկանց շրջա-
նում, նոյն զբաղմունքներով .. ահա այժմ
ողբում, լաց ես լինում. երևում է, որ ան-
բախտ ես բաղերից և սագերից, որովհետև
նրանք ուր էլ տեղափոխուեն ամէնեկն չեն
գանգատուի իրենց վիճակից .. բայց միթէ

Թուշունները զրկուած են խելքից, մտքից որ պէսզի աւելի բախտաւոր կերպով ապրին քան մարդիկ . . միթէ Աստուած մեզ խելը միտք է տուել նրա համար, որ անբախտ ապրենք և մեր ամբողջ կեանքն անցկացնենք արտասուքների մէջ Թափանցիր մարդկային կենաց մէջ և կը հասկանաս, որ մարդկանց համար կարգադրուած է միասին ապրել ոչ թէ բաժան բաժան .

Երբ նորա միասին ապրեն կը բախտաւորուեն միմիանցով. իսկ եթէ ստիպուած լինին հեռանալու, բաժանուելու, այն ժամանակ չպէտք է "տխրենք, այլ ընդհակառակը պիտի ուրախանանք գէթ նրանով, որ մենք մարդիկս տարբերուամ ենք բոյսերից, որոնք իրենց արմատներով ամրապնդուած են միայն մի տեղում: Բախտաւոր չես կարող լինել երբ ցանկանաս այն, ինչ որ անկարելի է անհնարին է. և ընդհակառակը, կարելի է բախտաւոր լինել այն ժամանակ, երբ ցանկանաս հնարաւորը, որովհետև այդպիսի դէպքում միշտ կարող ես սենենալ այն, ինչ որ ցանկանում ես:

Շատ լաւ կը լինի երբ ցանկանանք միայն այն, ինչ որ մեր իշխանութեան տակ է, այն, ինչ որ հնարաւոր է. Ով կամենում է ան-

կարելին, նա ստրուկ և յիմար է ու Ասածոյ հրամաններին, կարգադրութիւններին հակառակ գնացող: Մեր Տէրը կամենում է որ բախտաւոր լինինք, սակայն դրա հետ էլ պէտք է հասկանանք, որ բոլոր ծնունդները մահկանացու են և անպատճառ պէտք է մեռնեն և մարդիկ պիտի բաժանուեն: Ով շեղում է Ասածոյ օրէնքներից, նա ստրուկ և անբախտ է, միշտ կայրուի, կը չարչարուի ու կը տանջուի և այլն:

— Ուրեմն ինչպէս ապրել. հարցնում ես դու:

Ս.մէնից առաջ և ամէնագլխաւորը, ոչ մի բանի հետ չկապուել. ամէն բանի վրայ այնպէս օտարի իրերի, որոնց մասին չիտես որ շուտով կը վերցնեն քո մօտից: Երբ գրկում ես քո երեխային, եղբօր, բաժակամին, ընկերոջ և այլն—այն ժամանակ սա քեզ, որ դու գրկում ես այնպիսի բան, որ շուտ թէ ուշ պէտք է մեռնէ և պարտաւորուած է քեզ միայն ժամանակաւորապէս: Խաղողը հասնում է միայն աշնան և ծիծաղելի կը լինի ցանկանալ, որ նա աճի, շուտով տայ և ձմեռը և գարնանը և ամառը. ցանկանալ որ ոչ ոք քեզանից չբաժանուի, մեռնի . . այդ միևնոյն է թէ ցանկանալ խա-

դող ձմեռը. գրկիր, փարիր քո երեխային
բարեկամին, ընկերոջ և այլն, իսկ մտածիր,
վաղը կերթաս, կը մեռնես և չես պատահ
այլևս...:

— Բայց չէ որ այդ նոյն իսկ կրկնել
անգամ դժուար է. ի՞նչ արած. եթէ մահ
քեզ այդպէս սարսափելի է թուում, պէտք
հնձի ժամանակ ցաւես հասկերի կամ հա
ցահատիկների, իսկ աշնանը լաց լինես, ող
բաս ծառերից թափուած չորացած տերև
ների մահը...:

Փորձանքը մարդկանց համար ոչ ա
լինչ է, եթէ ոչ մի չնչին փոփոխութիւն. իս
մահը՝ նոյնպէս փոփոխութիւն է, միայն մ
քիչ մեծ:

Աշխարհի մէջ չկայ կորուստ, այլ միայ
փոփոխութիւն մի կեանքից մի ուրիշը.
Մեզ հետ էլ պատահում է այդ փոփո
խութիւնն այն ժամանակ, երբ Աստու
կամենում է. չէ որ մենք ծնուել ենք ոչ թ
այն ժամանակ, երբ մենք ենք ցանկացե
այլ երբ Աստուած է կամեցել. այդ պատճա
ռով ահա խելօք կամ իմաստուն մարդն ա
խատում է լրիւ կերպով կատարել Աստծ
կամքը և խորհում է իւր հոգու խորքու
այսպէս, — եթէ ցանկանում ես, Տէր, որ է

ապրեմ, կապրեմ այնպէս, ինչպէս Դու ես
հրամայում. կառաջնորդուեմ այն ազատու
թեամբ, որ Դու ինձ տուիր ամէն բանում,
ինչ որ ինձ է պատկանում... բայց եթէ այլևս
պէտք չեմ, թող լինի Դու կամքի համաձայն.
մինչև այսօր ապրել եմ երկրի վրայ յատկա
պէս Գեղ ծառայելու համար, իսկ եթէ վաղը
մահ կուղարկես, այն ժամանակ ես կերթամ
աշխարհից ... և այլն:

Եթէ ապրում ես մի օրեկից տեղ, եր
բէք չմտածես թէ առանց միջոցի, փողի
ինչպէս ապրեմ, կամ ի՞նչպէս անեմ, որ
լաւ տեղ ապրեմ թէ այժմ և թէ ապա
գայում. այլ մտածիր միայն թէ ի՞նչպէս
անեմ, որ խելօք և մարդավարի ապրեմ ..
այն ժամանակ ահա քո բոլոր բաւականու
թիւնները կը փոխարինուին մի բաւականու
թեամբ՝ այն դիտակցութեամբ, որ ապրում
ես խելացի և ծառայում ես Աստծուն ոչ
միայն խօսքով, այլ և գործով: Աստուած
այսօր քեզ առաջնորդում է մի տեղ, վաղը
կուղարկէ մի ուրիշ տեղ. նա քեզ մօտ կու
ղարկէ հիւանդ, անտէր աղքատներ, որպէսզի
կարողանաս քո կեանքի օրինակով զրահա
ւորել նրանց այն ճշմարտութեամբ, թէ բա
րիք փնտռել հարկաւոր է ոչ թէ իրենից

դուրս, այլ հէնց իրեն մէջ ... Մի մտածի
թէ Սստուած չի տեսնի քեզ, կամ անու-
շադիր կը թողնի երբ ուղարկի աղքատու-
թիւն, հիւանդութիւն, մարդկանց արհա-
մարհանք և այլն. տէրը չի կարող չտեսնե-
լու այն ծառային, որը շատ լաւ կերպով և
ամէնայն հաւատարմութեամբ է կատարում
իւր տիրոջ կամքը. Սստուած չի մոռանայ
քեզ. նա չի մոռանում նոյն իսկ ամէնա-
փոքր արարածին. դրանով միայն վարժեց-
նում է քեզ և օրինակ ծառայեցնում ու-
րիշներին համար ...

Յաւալի չէ երբ մենք մեր բնակութեան
տեղը փոխենք, այլ ցաւալի է երբ տխրենք
նրա համար, որից երբէք փախչել չենք կա-
րող:

XII

Ինչի՞ մէջ պէտք է փնտնել բարիք:

Չկայ այնպիսի մի ամուր և առողջ
մարմին, որ ոչ մի անգամ ցաւած չլինի կամ
չցաւի. չկայ այնպիսի մի գործ, առևտուր,
որ դէթ քիչ քանակութեամբ չլնատուի. չկայ
նոյն իսկ մեծ իշխանութիւն, որի տակ փոս-

չփորուի, որի դէմ դաւադրութիւն չսար-
քուի: Ամուր և առողջ մարմինը, հարստու-
թիւնը, իշխանութիւնն և այլն, ապականա-
ցու, կորստական, անցողական են. և եթէ
մարդ իւր յուսը, կեանքն այդպիսի բաների
վրայ դնի, միշտ անհանգիստ կը լինի, կը
վախենայ, կը տանջուի, կայրուի, կը չարչա-
րուի և այլն և այլն .. նա երբէք չի հասնի,
ձեռք չի բերի այն, ինչ որ կամենում է և
կընկնի նրա մէջ, ինչից որ ուզում է փախ-
չել: Միայն մարդկային հոգին է անվտանգ
և ըստ ամէնայնի անձեռնմխելի. ինչո՞ւ հա-
մար ամէնքս էլ աշխատում ենք թուլացնել,
քանդել մեր այս միակ, եթէ կարելի է ա-
սել, ամբողջութիւնը, բերդը. ինչո՞ւ համար ենք
այնպիսի գործերով զբաղւում, որոնք հոգե-
կան բաւականութիւն չեն կարող պատճա-
ռել. ինչո՞ւ չենք զբաղւում այնպիսի գործով,
որ մեր հոգուն հանգստութիւն, խաղաղու-
թիւն տալ կարող է: Մոռանում ենք միան-
գամայն, որ եթէ մեր խիղճը մաքուր պա-
հենք, այն ժամանակ ոչ ոք չի կարող մեզ
թշնամանել. մենք ենք մեր անխելքութեան
և տարօրինակ ցանկութեանց պատճառով
ընկնում վէճերի և թշնամութիւնների ետե-
ւից: Փնտռել իւր բարիքը և փախչել չարու-

թիւնից, ինքն ըստ ինքեան հարկաւոր է. բայց միթէ բարիքը և չարիքը ինձ համար այն է, ինչ կապում կամ կախուած է ուրիշ մարդկանցից. եթէ իրօք այդպէս լինէր, այն ժամանակ կը նշանակէր թէ մարդ առանց ուրիշի օգնութեան չի կարող բարիքի հասնել, բարիքը հետևապէս անհասանելի մի բան է. բայց ի՞նչպէս կարող է կոչուել բարիք այն, որին անկարելի է հասնել:

* * *

Ո՛չ, բարեկամներ, մեր միակ բարիքը և չարիքը մեր մէջ, մեր սեպհական հոգւոյ մէջ է: Մեզանից իւրաքանչիւրի բարիքն իւր խելացի ապրելու մէջն է—իսկ չարիքն ընդհակառակը.. եթէ այս մենք շատ լաւ հասկանանք, այն ժամանակ ոչ ոքի հետ երբէք ոչ կը վիճենք և ոչ էլ կը թշնամանանք:

Սուրբատէս փիլիսոփան շատ լաւ էր հասկացել այս. կնոջ չարութիւնները և որդու ապերախութիւնը չկարողացան նրա աչքերից արտասուքներ հոսեցնել իրեն վիճակուած այդ տեսակ բախտի կամ ճակատագրի համար. կինը լուացքաշուրը թափեց գլխին և այլն, բայց նա ասաց. «Ս.յդ արդէն ինձ չի

վերաբերում. այն ինչ որ իմն է, այսինքն իմ հոգին, ոչ ոք չի կարող ինձանից յափշտակել, վերցնել. այս նկատմամբ անզօր է մարդկանց ամբօխը մի մարդու դէմ և ամէնաուժեղը ամէնաթոյլի դէմ .. այս պարզւը շնորհուած է Աստուածանից իւրաքանչիւր մարդու»:

Այդպէս են ապրել իմաստուն մարդիկ—Իսկ մենք կարողանում ենք միայն լաւ դրել, կարդալ, դատել ... բայց երբէք չենք աշխատում ինքներս էլ դործով ցոյց տալ մեր ասածները: Մի շատ հին ազգի համար ասում էին, որ նրանք իրենց տան մէջ առիւծներ էին, իսկ ուրիշ երկրում աղուէսներ .. մեր մասին էլ կարելի է ասել, որ մենք խօսելու մէջ առիւծներ ենք, իսկ դործում աղուէսներ:

XIII

Ինչից պէտք է եւ ինչից չպէտք է վախենալ:

Ամէն մի չարիք յառաջ է դալիս մեր սխալ հասկացողութիւնից և անիրաւացի ցանկութիւնից. դրա համար էլ պէտք է ամէնայն աչալրջութեամբ և երկիւղածու-

Թեամբ ուշագիր լինինք թէ ինչպէս են կազմուում առհասարակ մեր հասկացողութիւններն ու ցանկութիւնները. մնացեալները մեզ համար կարևորութիւն չեն ներկայացնում, որովհետև արտաքին են և մեր կամքից անկախ, ուստի և ազատ մեր իշխանութիւնից . և որովհետև ազատ են մեր իշխանութիւնից, նրանցից վախենալ երբէք պէտք չէ: Շատ լաւ պիտի հասկանանք, որ ինչ մեր իշխանութեան ներքոյ չէ, արտաքին է և մեզ համար ոչ մի գործնական նշանակութիւն ունենալ չի կարող, եթէ միայն աչալրջութեամբ հետեւենք մեր հասկացողութիւններին և ցանկութիւններին:

Բայց երբ ենք հանդիստ և խաղաղ լինում. այն ժամանակ անշուշտ, երբ մեր գործերը մեզանից են կախուած:

Եթէ կարողանանք մեր հասկացողութիւններին և ցանկութիւններին տիրանալ, նշանակում է կը հեռանանք և չար բաներից. բայց եթէ խոյս տանք այն բաներից, ինչ որ մեր իշխանութեան տակ չէ, մեզանից անկախ է, այն ժամանակ ինքներս մեզ երկիւղից, փոքրիւթութիւնից կը ձգենք ցանցի մէջ: Տանջանքից, մահից անկարելի է վախշել և չպէտք է փախչել. նրանք մեր անբա-

ժան ընկերներն են. իսկ մենք նրանցից վախենում ենք. չարիքը մահուան, տանջանքի մէջ չէ, այլ երկիւղի, փոքրիւթութեան . ուղի է ասում Սոկրատէսը թէ՛ մենք երեսաների նման մեզ համար մի որևիցէ խրտուիլակ (չուչել) ենք շինում, ջարդում, փշրում, կտոր կտոր անում և ապա ինքներս վախենում նրանից, ինչպէս որ մանուկները վախենում են իրենց ձեռքով շինուած խրտուիլակից. այնպէս և մենք տանջանքից ու մահից խրտուիլակ ենք պատրաստում և վախենում նրանից: Իսկապէս ինչ բան է մահը, որ նրանից վախենում ենք. մի քիչ մտենանք այդ հրէշին, դիտենք նրան հետաքրքրութեամբ և կը տեսնենք, որ դա միայն ազուած, մանրուած մի խրտուիլակ է. չէ որ վերջ ի վերջոյ հոգին պէտք է բաժանուի մարմնից, ինչպէս որ բաժանուած էր մեր ծննդից առաջ: Չէ որ պէտք է մեռնենք, եթէ ոչ այսօր, բայց վաղը . և այլն. ինչո՞ւ համար ուրեմն այրուել, տանջուել, երբ այսպէս թէ այնպէս պիտի վրայ հասնի մահը:

— Ինչո՞ւ համար այդպէս է սահմանուած.

կը հարցնես դու.

Նրա համար որ աշխարհի կեանքը,

օրէնքն այդպէս են պահանջում. այս կեանքը հիմնուած կամ սահմանուած է այսպէս՝ անցեալին պիտի փոխարինի ներկան, սա էլ իւր ժամանակին տեղի պիտի տայ ապագային:

— Բայց ի՞նչ է չարչարանքը, տանջանքը:

Նոյնպէս երեխայական խրատելիակ է .. մեր մարմինը այնպէս է կաղմուած, որ ընդունում է հաճոյ և անհաճոյ զգայութիւններ. անհաճոյ զգայութիւնները կոչւում են տանջանք, չարչարանք .. բայց այսպէս թէ այնպէս հաճոյ և անհաճոյ զգայութիւնները պիտի վերջանան մեր մահով. ինչո՞ւ վախենանք տանջանքից և այլն, երբ նա ևս ժամանակաւոր է. մեր ունեցած այս տեսակ մտքերն ու հասկացողութիւններն ահա դարձնում են մեզ աներկիւղ, համարձակ այն ամէն բանի նկատմամբ, ինչ որ մեր կեանքի համար երկրորդական է:

Այսպիսի մտքերի և մտածողութիւններով մէջ է կայանում կեանքի ամէնամեծ ուսումը...

Խելօք մարդը չի վճատայ բամբասանքից ոչ կը գոռոզանայ եւ ոչ էլ կը նախանձի:

Ես վշտանում եմ, որ մարդիկ իմ մասին ուղիղ չեն մտածում, դատում:

— Չէ՞ որ ոչ թէ դու, այլ նրանք են այդ բանում մեղաւոր. ուրեմն ինչո՞ւ համար ես վշտանում:

— Յանկանում եմ ցոյց տալ նրանց, որ սխալւում են. նրանք ցաւում, ափսոսում են, երբ ես լաւ, ճշմարիտ կերպով եմ վերաբերւում. իսկ երբ իսկապէս յանցաւոր եմ, այն ժամանակ դովաբանում են. օրինակի համար, նրանք ցաւում, ափսոսում են, որ ես հարստութեան, իշխանութեան չեմ ձգտում:

Յոյց տալ մարդկանց, թէ ինչու՞մ է իրենց սխալը և համոզել այն բանում, ինչ որ խելացի է և այլն, այդ քո իշխանութեան մէջ չէ և քո կարողութիւնից վեր է. դու իշխանութիւն ունիս միայն քեզ վրայ և կարող ես ինքդ քեզ համոզել .. համոզուած ես այն բանում, ինչի մէջ ցանկանում ես հա-



մողել ուրիշներին. ինքդ իմանում ես որն է բարին և որը չարը. ապրում ես արդեօք այնպէս ինչպէս պէտք է: Եթէ աշխատես որ մարդիկ չսխալուեն և այդ պատճառով վշտանաս, չարչարուես, տանջուես, այրուես և այլն, նշանակում է թէ հաստատապէս չգիտես որն է բարին և որը չարը: Աւելի լաւ չի՛ լինի ուրիշին հանգիստ թողնես և ամէնից առաջ քեզ սովորեցնես. ամէնից աւելի լաւ քեզ ես ճանաչում և կարող ես աւելի հեշտութեամբ համոզել քան ուրիշներին: Եթէ խելացի կերպով ես ապրում, իսկ մարդիկ դրա համար ցաւում են, ի՛նչ պէտք է անես. պէտք է թողնես լաւ ապրելը, որպէսզի մարդիկ դադարեցնեն իրենց բամբասանքը և կեղծ ցաւակցութիւնները. ո՛չ, խելացի մտքերդ քեզ օգնական ընտրիր և միշտ լսիր նրանց: Բա՛շը չգործածելուց ժանդոտում է. այդպէս և քո բոլոր խելացի մտքերը եթէ չգործադրես, անօգուտ և անպէտք բան կը դառնան:

Պէտք է անպատճառ ազատես քեզ երկիւղից, չարչարանքից և այլն. բայց վախենում ես մարդկային բամբասանքից, վշտանում ես նրա համար, որ մարդիկ իզուր տեղը քեզ համար ցաւում են, կամ ցան-

կանում են դրա փոխարէն քեզ դովել և յարգել: Եւ ի՛նչ է դուրս գալիս քո այս տանջանքից. . . եթէ իրօք այդ պատճառով ես ցաւում, վշտանում, այն ժամանակ դուրս է գալիս, որ խղճալի ես և ճշմարտութեան հասնել չես կարող:

Անտիսթեռնէսը սովորեցնում էր, թէ մարդ պէտք է և պարտաւոր է լաւ լինել. միևնոյն ժամանակ պատրաստ իրեն մասին միշտ վատը լսելու:

Ի՞մ գլուխը չի ցաւում, իսկ ուրիշները կարծում են թէ ցաւում է. ի՛նչ անեմ. ես բոլորովին առողջ եմ, իսկ ուրիշները ցաւում, ափսոսում են, որ ես հիւանդ եմ. . . դրա համար ես միայն թեթեւ կերպով ժպտում եմ: Դու ևս այդպէս վերաբերուիր:

* * *

Բայց ահա բախտը ուրիշներին հարստութիւն է տալիս, մեծ մեծ պատիւներ, իշխանութիւն է շնորհում, իսկ ինձ ոչ. — Դէհ, ի՛նչ անենք. չէ՞ որ արդարացի է. մարդիկ ունին այն, ինչի որ ձգտել են. նորա աշխատել, չարչարուել են, որ հասնեն հարստութեան, իշխանութեան, իսկ դու աշխատել

ես, որ ուղիղ և ճշմարիտ կերպով մտածես
 և լաւ ապրես, նրանք ստացել են այն, ինչ
 որ փնտռել են, իսկ դու ստացել ես այն
 ինչ ցանկացել ես .. նրանք իշխաններ են
 դու ոչ, նրանք հարուստներ են, դու ոչ, բայց
 չէ որ ինքդ չես ցանկացել ոչ հարուստ
 ոչ էլ իշխանաւոր լինելու, այդպէս բան չ
 լինում, որ նա, ով չի աշխատում մի բան
 համար, ձեռք բերի նրանից աւելի, ով չար
 չարւում, աշխատում է այդ ձեռք բերել
 չէ որ կորսուած իրը գտնում է նա, ով
 փնտռում է, և ոչ թէ նա, ով ամէնեւին չ
 էլ մտածում այդ մասին:

Ենթադրենք թէ այդ այդպէս է, բայց
 ըստ իս, աւելի ճշմարիտ և արդարացի է, երբ
 նա, ով մտածում, արդար և ճշմարիտ կեան
 քով է ապրում, առաջնակարգ պատիւ ստա
 նայ ամէն տեղ:

— Այն, նա առաջինն է իւր գործում
 այն է ճշմարիտ մտածողութեամբ, արդար
 կեանքով. իսկ միւսներն առաջնակարգ են
 իրենց գործում, այսինքն հարստութեան
 իշխանութեան մէջ. միթէ կարծում ես, երբ
 դու լաւ ես մտածում և այլն, դրա համա
 էլ կարող ես պահանջել, որ հրացանն աւել
 լաւ նշանես քան որսորդը կամ հրացանա

ձիգը, և երկաթն աւելի լաւ կռես քան
 դարբինը. թէև դու ամէնեւին այդ տեսակ
 գործերով երբէք չես զբաղուել. իհարկէ
 եթէ ցանկանաս ունենալ և այն, որին չես
 ձգտել հասնելու, ձեռք բերելու, այն ժամա
 նակ սախալուած կը լինիս շատ լաց լինել
 տանջուել, չարչարուել..:

Ձի կարելի երկու գործը միաժամանակ
 կատարել. նա վեր է կացել դեռ արշա
 լոյսը չբացուած և միայն այն մասին է մտա
 ծել թէ ինչպէս, ինչ միջոցով մտենայ, շա
 ղըբորթէ պարատական ծառաների, սպասա
 ւորների առաջ, պարզեւէ ում ինչ հարկա
 ւոր է, նրանց աչքը քաղցրացնելու դիտա
 ւորութեամբ և այլն: Նա աղօթելիս անգամ
 չի մոռանում այդ մասին մտածելը:

Բայց իրօք եթէ ցանկանում ես խելացի
 կեանքով ապրել, ընդհակառակը փնտռիր քո
 սխալները և մտածիր միայն այն մասին, թէ
 ինչպէս ուղղես քեզ. պէտք է համոզուած
 լինիս, որ քեզանից կախում չունեցող և ոչ
 մի բան չի կարող ոչ տրամեցնել և ոչ էլ
 ուրախացնել քեզ, ոչ մեր մարմինը, ոչ հարս
 տութիւնը, ոչ էլ փառքը. պէտք է չմոռանաս,
 որ խիղճ և միտք ունիս ու միայն դրանք
 կարող են առաջնորդել քեզ դէպի հոգեկան

հանդատութիւնն և բախտաւորութիւնն:

Անուշադիր թող մարդկանց գովասանքը և ամէնեւին շնախանձես նրանց .. նրանք ոչ բարկանում և ոչ էլ դարմանում են, երբ դու ցաւում ես իրենց համար. նրանք այնպէս են հաւատացած, որ իրենց բախտն առաւել է քոնից .. իսկ դու հաւատացած չես որ քո բախտն առաւել է նրանցից .. նրանք ամէնեւին չեն նախանձում քեզ և բոտ ամէնայնի դո՛հ են իրենց վիճակից. իսկ եթէ դու իսկապէս ցանկանում ես ապրել խղճով և այլն և եթէ իրօք հաւատում ես, որ հէնց դրա մէջ է և քո բարիքը, որ ուրիշները սխալում, մոլորում են, այն ժամանակ երբէք անհանգիստ չես լինի մարդկանց լաւ և վատ խօսածներից:

XV

Ինչպէս պէ՛տ է համբերութեամբ սանել վիրաւորանք:

Խելօք մարդը ոչ միայն չի կռուի, այլ եթէ կարող է, չի թողնի որ ուրիշներն էլ վիճեն, կռուեն միմեանց հետ:

Այս նկատմամբ Սոկրատէսն է ամէնա՛

լաւ օրինակը. նա շատ լաւ իմանում էր, որ ուրիշը չի կարող տէր դառնալ մեր հոգուն և մեր իշխանութիւնից, իրաւունքից վեր է հարկադրել ուրիշին, որ խելացի վարուի, վերաբերուի: Մենք պէտք է յարմար դէպքում, մեր կարողութեան չափ, աշխատենք համոզել մարդկանց, որ խելացի ապրեն. բայց մեր խօսքերի յաջողութիւնը մեզանից չի կախուած .. մեզանից կախուած է միայն այն, որ մենք ամէնատուղիղ, անկեղծ և ճշմարիտ կերպով վարուենք, վերաբերուենք. այդ է ամէնից գլխաւորը. իսկ մեր գործերն արդէն իրենք կը համոզեն, կը սովորեցնեն մարդկանց բարութեան, արդարութեան:

Խելօք մարդը նոյնպէս կռուելու առիթներ չի փնտռի:

Անցորդն ինձ հայհոյեց, ասում ես դու.

Ասա շնորհակալ եմ որ չճեծեց էլ.

Նա ճեծեց.

Ասա շնորհակալ եմ որ չվիրաւորեց, վէրք չտուաւ.

Նա վիրաւորեց ինձ..

Շնորհակալ եղիր որ քեզ չսպանեց...

Ինքներս ենք մեղաւոր, երբ մարդիկ չար են. եթէ մենք բարի լինէինք, չար մարդկանց թիւն էլ շատ քիչ կը լինէր:

իմ հարեանը քար նետեց պատուհանիցս ներս:

Դէ ինչ է որ, չէ որ ոչ թէ դու, այլ նա է այդ բանում յանցաւոր:

Բայց տանս իրերը փշրուեցին:

Միթէ դու ծաղկաման ես, չէ որ քեզ կտարել, փշրել չի կարելի, դու խիղճ և խելք ունիս, քո հարեանի հետ խելացի և խղճով վերաբերուիր, եթէ դու ցանկանայիր դազանաբարոյ վերաբերուել, այն ժամանակ պիտի յարձակուէիր և կրճէիր միտը: Բայց կամենում ես մարդավարի լինել, վերաբերուիր ուրեմն քեզ զբկողի, վիրաւորողի հետ մարդավարի և հեղութեամբ, ոչ թէ սխակալութեամբ և բռնութեամբ:

* * *

Զին ազատուում է իւր թշնամուց արագ վազելով, և նա անբախտ չէ, երբ չի կարողանում կանչել արագազի պէս, այլ անբախտ է, երբ կորցնում է այն, ինչ որ իրեն է տուած, այսինքն արագ վազելը: Շան տուած է հոտառութիւն, նա անբախտ կը լինի այն ժամանակ, երբ զրկուի իւր այդ պարգևից և ոչ թէ երբ չկարողանայ թուչել և այլն: Այդպէս և մարդ

անբախտանում է ոչ թէ այն ժամանակ, երբ չի կարողանում յաղթել արջին, առիւծին, չար մարդկանց, այլ այն ժամանակ, երբ կորցնում է այն, ինչ որ իրեն է տուած. այսինքն՝ բարութիւն, արդարադատութիւն և այլն: այդ տեսակ մարդն իրօք անբախտ է և արժանի ցաւակցութեան:

Յաւ չէ երբ մարդ ծնւում, մեռնում, զրկւում է իւր բոլոր փողերից, տնից, կարողութիւնից և այլն, այդ ամէնը մարդուն չի պատկանում: Բայց ցաւալի է, երբ մարդ կորցնում է իւր ճշմարիտ, իսկական սեպհականութիւնը՝ այսինքն իւր մարդկային արժանաւորութիւնը: Եթէ մանէթի կնիքն իսկական է, նշանակում է նա պէտքական է, իսկ եթէ կնիքը կեղծ է, անպէտք է: Այդպէս է և մարդը, եթէ նա ունի մարդկային արժանաւորութիւն, եթէ նա մարդկանց հետ վերաբերւում է հեղութեամբ, համբերութեամբ և քաղցրութեամբ, ամէնքն էլ ընդունում են սիրով, յարգում են ի բոլոր սրտէ: Բայց այն մարդը, որ միայն կենդանական յատկութիւն ունի, որ բարկանում է, սխակալ է, և ամէն ինչից անբաւական և այլն, նրանից զգուշանում և փախչում են:

Եթէ մարդ չար մտածմունք ունի, նա

այդ բոսպէին մարդ չէ. նրան պէտք է խղճալ. արտաքին դէպքով ներքինը հասկանալ, դատել անկարելի է. հրաշալի կերպով կարմրացրած մոմեղէն խնձորը նման է իսկական խնձորին. բայց նա չունի ոչ համ, ոչ հոտ և ոչ էլ իսկական խնձորի ներքին կազմը, ձևը. նոյն կերպ էլ անհաճելի է ունենալ մարդկային արտաքին պատկեր, դէմք. անպատճառ պէտք է ունենալ և խելքը և մարդկային ազատ կամք: Եթէ մէկը, օրինակի համար, չի լսում իւր խելքին, մտքին և չի ուզում հասկանալ իւր սխալները, մինչև անգամ այն ժամանակ, երբ նրան պարզապէս ցոյց են տալիս, այդ բոսպէին իշխեց ինչով է տարբերում. ոչնչով. կամ ուրիշը երբ չի կարողանում զսպել իւր կիրքը, բարկութիւնը, ինչով է տարբերում ոչխարից. իսկ մի ուրիշն էլ երբ մարդկանց անպատուելու, վիրաւորելու, վրասելու համար ոչինչ չի խնայում, այդպիսինն արդէն ոչ էլ է և ոչ էլ ոչխար, այլ ուղղակի վայրենի գաղան:

* *
* *

Բայց միթէ պարտաւոր եմ թոյլ տալու, որ ինձ արհամարհեն:

Ո՞վ է քեզ արհամարհում. խելօք և արդարադատ մարդը չի արհամարհի քեզ քս հեղուկութեան և բարութեան պատճառով. իսկ ուրիշ մարդկանց հետ դործ չունիս և անուշադիր թող նոցա ասածները:

Բայց եթէ սկսեմ անուշադիր թողնել նրանց ասածները, այն ժամանակ աւելի կը չարանան և կը վրասեն ինձ. ասում ես «կը վրասեմ ինձ». միթէ մէկն ու մէկը կարող է վրասել քս հոգուն. ինքս ինձ ժպտում եմ նրանց վրայ, որոնք մտածում են թէ կարող են վրասել ինձ. նրանք չեն հասկանում թէ ես ինչի մէջ եմ ենթադրում, ընդունում բարին և չարը. նրանք չեն իմանում, որ իւրենք մինչև անգամ չեն կարող մտնենալ, շօշափել այն, ինչ որ իսկապէս իմն է և որով միայն սպրում եմ ես:

XVI

Ինչք կարող եւ ինչք չենք կարող գործել:

Պրագիտութիւնը սովորեցնում է միայն թէ ինչպէս պէտք է դրել. կարդալ և այլն. նա չի սովորեցնում մեզ թէ պէտք է արդեօք մեր բարեկամին նամակ դրել թէ ոչ.:

բայց կայ մի միջոց, որը ցոյց տար մեզ, սովորեցնէր թէ ինչ պէտք է անել և ինչ ոչ, այն, այդ միջոցը, այդ կարողութիւնը մեր միտքը, մեր խելքն է. մարդ իւր մտքով դատում է ամէն բանի մասին և իւր կարողութեան չափով հասկանում է թէ այս ինչ գործը չարժէ կամ չպէտք է գործել և ընդհակառակը անհրաժեշտ, կարևոր է այս ինչ գործով զբաղուել, երբ է կարևոր և երբ ոչ. և այլն:

Ինձ այսպէս ստեղծելով, ինչպէս որ կամ, Աստուած կասէր ինձ. «էպիկտետ, ես կարող եմ քո հողեղէն մարմնիդ աւելի բան պարգևել. բայց մի մտռանայ, որ մարմինդ քօնը չէ. նա ոչ այլ ինչ է եթէ ոչ մի բուռ հող, ճաշակաւոր ձև ստացած. քո այդ հողեղէն մարմնի մէջ բնակեցրել եմ աստուածային մի մասը և քեզ միջոց եմ տուել թեքուելու դէպի բարին և փախչելու չարից. ես բնակեցրել եմ քո մէջ ազատ մտածողութիւն, հասկացողութիւն... այդքանը քիչ մի համարիր, դու գրանով էլ քո ամբողջ կեանքի ընթացքում կարող ես ապրել խելօք, հանդիստ և սերախ. այդ է քո բաժինը, բաւականացիր գրանով...»:

Բայց փոխանակ մտքով լուսաւորուելու

և մեր կեանքն ուղղելու, ծանրաբեռնուած ենք բազմաթիւ կողմնակի աշխատանքներով. մէկն աշխատում, չարչարում է իւր մարմնի առողջութեան համար և դողդողում է հէնց որ լսում է հիւանդանալ բառը. ուրիշը տանջում է իրեն հարստութիւն ձեռք բերելու հոգսերով, երրորդն ալէկոծւում է իւր սրբու, եղբօր գործերի համար և այլն: Մենք յօժար կամքով ծանրաբեռնուած ենք մեզ այս տեսակ անպէտք, անկարևոր աշխատանքներով և նոքա կախում են սրպէս ծանր քարեր մեր վզից: Այդ միեւնոյն է թէ մարդ ցանկանայ առաքաստաւօր նաւով ամբողջ ծովը կտրել և անցնել. որի համար նստում, տեղաւորում է ծովի ամին ու սպասում յաջող քամու հոսանքին. անցնում է օրն օրի վրայ, սակայն քամին միշտ հակառակ կողմից է փչում և արգելք հանդիսանում...:

Տէր Աստուած, բացականչում է նա յուսահատուած, երբ արդեօք իմ ճանապարհի համար յարմար քամի կը փչէ:

Երբ նա ինքը կամենայ, սիրելի բարեկամ:

— Ի՞նչ անեմ այժմ... հնազանդուիր նրան, հաշտուիր այն ամէնի հետ, ինչ քեզանից չի կախուած, քո իշխանութեան ներ-

քոյ չէ... Ձէ որ ամէն բան կառավարուով է ոչ այնպէս ինչպէս դու ես ցանկանում, այլ ինչպէս Աստծուն է հաճելի:

Ապա ինչի մասին պէտք է մտածեմ, որպէսզի ասլրեմ քո ասածի համաձայն .. ամէնից առաջ իմացիր թէ ինչն է և ինչը չէ քո իշխանութեան տակ, և յետոյ կատարիր այն, ինչ որ քո իրաւունքի ներքոյ է և ընդհակառակը, օրինակ, դու անպատճառ պիտի մեռնես. բայց անհրաժեշտ է որ դրա համար լաց լինես.. քեզ ոյժով քաշ են տալիս բանտ, չես կարող խոյս տալ դրանից... քեզ հալածանքի են ենթարկում և այլն .. այս բոլորի նկատմամբ ոչ ոք չի կարող խանդարել երբ դնաս հանգիստ հոգւով և ուրախ սրտով:

Քո ընկերոջ բոլոր գաղանիքները պատմիր ինձ, կասէ, կը ստիպէ ինձ իմ թշնամին:

Ո՛չ, ես այդ չեմ ասի քեզ, կը պատասխանեմ ես, որովհետեւ իմ բարեկամի գաղանիքներն ասելը կամ չասելն ինձանից է կախուած: Բայց քեզ կը շղթայեմ և աքսոր կուղարկեմ, եթէ ընկերոջդ գաղանիքները չասես:

Ի՞նչ ես ասում, դու ինձ չես շղթայի. կը շղթայես միայն իմ ոտները, ձեռքերը,

իսկ ինձ, իմ հոգուն, իմ կամքին, իմ մտքին չես կարող շղթայել. որովհետեւ բացի ինձանից ոչ ոք ոյժ, կարողութիւն չունի նրանց վրայ իշխելու:

Գլուխդ կը կտրեմ, բայց մի՛թէ երբ և իցէ ասել եմ թէ դժուար է իմ գլուխը կտրելը, քան ուրիշինը...:

Ահա այդպիսի մտքերի, խորհրդածութիւնների մէջ պէտք է անդադար վարժուես:

Ո՛վ խորհել և հասկացել է, որ ինքը ինչ կարող է անել և ինչ ոչ, նրան չի խանդարել ոչ մի արգելք և պատահար. որովհետեւ նա միշտ կը ցանկանայ միայն այն, ինչ որ կարելի է ձեռք բերել և խոյս կը տայ նրանից, որին հասնել չի կարող:

Դուք ինձ մահուան դատապարտեցիք. կասէ այս տեսակ մարդը, եթէ ցանկանում էք կտրել իմ գլուխը հէնց այժմ, համեցէք, պատրաստ եմ. իսկ եթէ երկու կամ երեք ժամից յետոյ կը գլխատէք, այդ ժամանակամիջոցում կը ճաշեմ, որովհետեւ քաղցած եմ. յետոյ իւր ժամանակին կը մեռնեմ:

Եւ դու հանգիստ կերպով կերթաս գլխատուելու. կը հարցնեն նրան. բոլորովին հանգիստ, կը պատասխանէ նա. ճիշտ այն

մարդու պէս, որը տալիս է այն, ինչ որ իրան
չի պատկանում:

XVII

Մարդ պէ՛ս է անդադար կերպով հսկէ,
դի՛սէ իրեն:

Եթէ նոյն իսկ հէնց մի վայրկեան ան-
գամ դադարես քեզ գիտելուց, այն ժամա-
նակ յիշիր, որ այդ վայրկեանն երբէք յետ
չես դարձնի:

Աւելի շատ և հեշտութեամբ հրաժար-
ուում ենք մեզ ուղղելուց. իսկ յետոյ միշտ
յետաձգում ենք մեր այդ սխալի ուղղելը
և գրանով էլ օրէցօր հեռացնում մե-
զանից բարերարութեամբ և բախտաւոր
ապրելու հնարաւորութիւնը. եթէ կարծում
ենք, որ մեզ ուղղելու գործի յետաձգելն է
օգտակար, աւելի լաւ է որ բոլորովին
մեզ ուղղելուց հրաժարուենք. իսկ եթէ
ներկայումս մեզ ուղղելն է օգտակար, ի-
զուր է այն ժամանակ յետաձգելը նոյն
իսկ մի օրով:

— Բայց այսօր ցանկանում եմ նուազել
և երգել. է՛հ որ ի՛նչ .. այդ երբէք քեզ չի

խանդարում միևնոյն ժամանակ գիտել քեզ ..
ոչինչ չի կարող փշանալ ուշադրութիւնից
կամ թէ լաւանալ անուշադրութիւնից. ա-
նուշադիր կերպով ոչ հիւան կարող է իւր
գործը կատարել, ոչ էլ նաւավարը իւր նաւը
կառավարել. եթէ դու էլ անուշադիր կեր-
պով մի գործ անես, այն ժամանակ վերջը
շատ դժուարութեամբ կարող ես ուղղել քեզ
և շատ հեշտութեամբ կենթարկուես ամէն
տեսակ գայթակղութեան:

* *
*

Երբ ինձ դիտում եմ, ի՛նչ բանի վրայ
պարտաւոր եմ առանձին ուշադրութիւն
դարձնել:

Ամէնից առաջ պարտաւոր ես ընդ միշտ
յիշել աստուածային ճշմարտութիւնները.
պահիր նրանց միշտ քո մտքի մէջ և առաւօտն
արթնանալիս և երեկոյեան քուն մտնելիս
և ցերեկը ճաշի ժամանակ և մարդկանց հետ
գործ ունեցած միջոցին. ըմբռնիր որ ոչ որ
չի կարող քո մտքի, կամքի վրայ տէր, իշ-
խան դառնալ, որ բարին և չարը գտնուում
են մեր մտքի և կամքի մէջ և այլն .. նշա-
նակում է, չկայ մարդ, որ իմ անձի դէմ

կարողանայ բարութիւնն և չարութիւնն գործել. այդ միայն և միայն ես ինքս կարող եմ անել. դրա համար էլ ահա չպէտք է վախենամ ոչ նեղացնողներից, ոչ հիւանդութիւնից, ոչ աղքատութիւնից և ոչ էլ մի արգելառիթ հանդամանքից. . .

— Գու, ասում են ինձ, դուր չես գալիս այս բարձրաստիճան մարդուն:

Այդ իմ գործը չէ, պատասխանում եմ. իմ միտքը և կամքը նրա իշխանութեան ներքոյ չեն:

— Բայց չէ՞ որ նա կարող է քո դէմ շատ չարիքներ գործել. — Նա կարող է չարիք գործել միայն նոցա դէմ, ովքեր նրան ընդունում են իրենցից աւելի ուժեղ. և միայն այդպիսիների համար է նա սարսափելի. ես ունիմ իմ տէրը, որին միայն հպատակում եմ. Աստուած է իմ տէրը և ես գործ չունիմ միւս տէրերի հետ, որովհետեւ Աստուած հէնց ինձ է նշանակել ինձ վրայ իշխան և այնպէս է տնօրինել, որ կարողանում հասկանալ իւր կամքը. . . կամենում եմ հեռուել միայն նրա օրէնքներից. Առաջնորդուելով աստուածանից ինձ պարզուած մտքով և խզճով, պէտք է անդադար կերպով դիտեմ ինձ և իմ կենաց բոլոր պատահարներում

աշխատեմ վերաբերուել այնպէս, ինչպէս որ պէտք է:

Պէտք է իմանամ, երբ հարկաւոր է աշխատել, երբ հանդատանալ, երբ ուրախանալ և կամ տխրել. . . պէտք է հասկանամ ինչն է ժամանակին և ինչն անժամանակ և այլն. . . երբ և ում հետ կարելի է հանաք անել, ծիծաղել և սրպիտի դիպումներում այդ ամէնն անտեղի կը լինի. . . Եւ ահա որպէսզի այդ ամէնն իրագործուի, անհրաժեշտ է մշտապէս արթուն կերպով դիտել իրեն և ոչ մի բան չանել աննպատակ կերպով:

Բայց միթէ առանց յանցանքի մարդ կը լինի. . . ի հարկէ ոչ. սակայն կարելի է աշխատել, ձգտել անմեղ լինելու. մանաւանդ որ այդ ամբողջովին հնարաւոր է մարդուն. և մեծ է լինում նրա ուրախութիւնը, երբ, շնորհիւ այն հանգամանքի, որ դիտում է իրեն, խոյս է տալիս մի որևիցէ վատ գործից և կամ զգուշանում է սխալներից. . .

Անմտութիւն է ասել թէ վաղը զգոյշ կամ աշարուրջ կը լինիմ. այդ միևնոյն է թէ ասել, այսօր ուզում եմ լինել անպէտքին կամ յիմարին մէկը. եթէ առ ինքդ ունեցած դիտողութիւնն օգտակար է վաղը, այն ժամանակ նոյն չափով, դեռ էլ աւելի, հար-

կաւոր և օգտակար է այսօր.. ահա դրա հա-
մար էլ դիտիր քեզ այսօր որքան հնարաւոր է
ուշադրութեամբ, որպէսզի վաղն անդդոյշ
չգտնուես կամ ձեռքից չփախցնես..:

XVIII

Մի դասիր ուրիշներին և մի լինիր ինք-
նանաւան:

Մարդու արտայայտած մտքերով չի կա-
րելի դատել, դադափար կազմել նրա մասին
թէ նա գործով ինչպէս կը վարուէր մեզ
հետ. այդպէս և ընդհակառակը. մարդուն
գործերով շատ դժուար է դատել, թէ նա
ինչ բանի համար է այդպէս գործում, ինչ
տեսակ մտքեր ունի նա իւր գլխում, ինչ
ձգտումներ իւր հոգում:

Երբ տեսնում եմ, որ մարդ առանց
յոգնելու գրում, կարդում է առաւօտից
մինչև երեկոյ կամ հէնց իւր գործի համար
ամբողջ գիշերներ է լուսացնում, այն ժամա-
նակ, էլի չեմ ասի, թէ այդ մարդը սիրում է
աշխատել մարդկանց օգտի համար, եթէ չեմ
իմանում ինչու համար է այդ բոլորն անում..

չէ որ ոչ ոք, ամբողջ օրերով փողոցներում
քաշ եկող մարդու մասին, չի ասի թէ նա
օգտակար է և կամ թէ նա սիրում է աշ-
խատել. ըստ երևոյթին ոչ թէ միայն վատ,
այլ և լաւ ու գեղեցիկ գործերը յաճախ
անում են ի սէր վատ, փուշ ու տարօրինակ
նպատակների. օրինակ՝ փողի, փառքի հա-
մար և չի կարելի այդ տեսակ մարդու հա-
մար ասել թէ նա աշխատասէր և օգտակար է,
ինչքան էլ որ անդուլ կերպով աշխատի և
կամ մեծ մեծ գործեր կատարած լինի:
Միայն այն ժամանակ կասեմ մարդու մա-
սին, որ նա սիրում է աշխատանքը և օգ-
տակար է մարդկանց, երբ իմանամ, որ նա
աշխատում է իւր հոգւոյ, Աստծոյ և մարդ-
կանց համար:

Եւ այց ուրիշի հոգին անթափանցելի է,
ինչպէս իմանամ մարդու ներքին ձգտումնե-
րը, որ միայն իրեն են յայտնի: Եւ բանից դուրս
է դալիս, որ մարդ չի կարող դատել մարդուն,
այսինքն՝ դատապարտել կամ արդարացնել
նրան, ոչ գովել և ոչ պախարակել, պար-
սաւել..:

Մի թէ կարելի է ասել, որ մարդը հիւսն
կամ երաժիշտ է, երբ տեսնես նրա ձեռքին
կացին կամ տաւիղ. ճիշտ այդպէս և չի կա-

րելի խելօք, իմաստուն անուանել մարդուն երբ խելօք, իմաստուն ճառեր է ասում:

Մարդուն խելօք, իմաստուն կարելի է անուանել այն ժամանակ, երբ նա խելացի դատողութեան հետ աշխատի գործով ցոյց տալ իւր բոլոր ասածները:

Մենք հեշտութեամբ կարողանում ենք ճանաչել արհեստաւորին, բայց յաճախ սխալուում ենք այն բանում, թէ ո՞րն է իմաստուն մարդը, որովհետեւ արամադիր ենք դատել նրան իւր արտասանած ճառերով և արտաքին գէսքով: Այն մարդուն իմաստուն մի կոչիր, ով իրեն իմաստուն է անուանում, ճիշտ այնպէս ինչպէս դու չես կոչի դարբին այն ամէնքին, ովքեր իրենց համար զնգան են գնում. եթէ ցանկանում ես արդար լինել, ամէնից առաջ համոզուիր որ դու վատ, անարդար ես. իսկական իմաստուն մարդը միշտ համեստ է և երբէք չի ձգտում իմաստունի հուշակ ձեռք բերել:

Մարդիկ յաճախ իմաստունների խօսքերից մի չնչին բան միայն հասկանալով, իրենց երեակայում են իմաստուններ. նորա իմաստութեան հետ այնպէս են վարուում, ինչպէս որկրամօխները համեզ կերակուրներէ. մի որևէ ճշմարտութիւն հասկանալով,

իսկոյն և եթ ցանկանում են բաւականութիւն և գովասանք ստանալ, դրա համար էլ սկսում են տաքացած կերպով վիճել պատահողի հետ, մինչև անգամ նրանց հետ, որոնք չեն ցանկանում նոյն իսկ լսել: Բայց դու, եթէ ցանկանում ես ճշմարիտ իմաստութեան մասնակից լինել, եղիր իմաստուն քեզ համար: Տես ինչպէս է բանում ցորենը. հատիկը ժամանակաւորապէս ձգում են հողի մէջ. նա այնտեղ արմատներ է արձակում կամ արմատաւորուում է, որպէսզի յետոյ լաւ աճի և հարուստ պտուղներ տայ. եթէ ցողունը դուրս գայ իւր ժամանակից առաջ, այն ժամանակ հասկը չի հասունանայ և պտուղ չի տայ.:

Դու ևս թող իմաստութեան արմատներն ամրանան քո մէջ, իւր ժամանակին կը հասունանան և նոցա պտուղները: Իմաստուն մարդը չի կարող պտուղներ չտալ. նրա պտուղներից էլ կիմացուի իւր իմաստութիւնը:

Ի՞նչպէս է վերաբերում իսկական մարդը:

Ամէն մի մարդ ունի բանականութիւն, և եթէ ապրի համաձայն դրան, այն ժամանակ խոյս կը տայ այն ամէնից, ինչ որ հաւանակ է բանականութեան:

Եթէ ուշադրութեամբ դիտենք մարդու կեանքը, պարզապէս կը տեսնենք, որ ոչ մի բանից նա այնքան չի տանջուում, որքան անխելքութիւնից, անմտութիւնից. որք կամ ինչը համարել խելացի և ինչը ոչ, այս նկատմամբ մարդիկ տարբեր կերպով են դատում. մէկը խելացի է կոչում այն, ինչ որ ուրիշը կոչում է անխելացի, նոյն իսկ ոչ միայն այս դէպքում, այլ և առհասարակ բոլոր դատողութեանց նկատմամբ. մէկն այսպէս է մտածում, ուրիշն այլ կերպ և այլն... Լինում են և այնպիսիները, որոնք առանց կարմրելու պատրաստ են կատարել ամէնացած գործերն անգամ, որպէսզի շողոքորթեն նրան, որից ցանկանում են ստանալ մի որևէ ցէ ողորմութիւն:

Մի անգամ մէկն ինձ ասաց, որ օգնիր

ինձ քո խորհրդով, ես ծառայում եմ մի հարուստ իշխանի մօտ. եթէ կեղծաւորութիւն չանեմ, ինձ կը ծեծի և հաց չի տայ՝ կը զրկի ամէն ինչից. ի՞նչպէս վարուեմ այս դէպքում:

— Լաւ է որ ամէն մարդ առանց ծեծուելու կերակուր ստանայ, քան թէ ծեծուի և կերակուր չստանայ:

Բայց չէ՞ որ պահանջում է ինձանից այն, ինչ որ ինձ համար իսկապէս ցածութիւն, ստորութիւն է:

Այդ արդէն քո գործն է. եթէ ցանկանում ես քեզ վաճառել, այն ժամանակ ինքդ մէնակ կարող ես վճռել, թէ ինչքանով ես գնահատում քեզ. զանազան մարդիկ վաճառում են իրենց տարբեր գներով. ես քեզ այսպէս եմ պատասխանում. որովհետև իրօք եթէ չես ցանկանում քեզ վաճառել, այն ժամանակ չէիր էլ հարցնի իմ խորհուրդը, այլ ինքդ քեզ ու քեզ կը վճռէիր չանել այնպիսի բան, որ անպատուաբեր է իսկական մարդուն:

— Բայց ի՞նչն է վայել կամ պատուաբեր իսկական մարդու համար...:

— Այդ հարցին էլ, բարեկամ, ինքդ կարող ես պատասխանել. հարցնում եմ քեզ:

եղն ի նչպէս է իմանում, որ ինքն այնքան ուժեղ է, որ կարող է պահպանել իւր հօտը զայրացած գաղանից. ինչո՞ւ համար է իւր թշնամու դիմաց դուրս գալիս փոխանակ փախչելու և այլն: Ձէ՞ որ պարզ է, նա ինքը շատ բաւ է իմանում իւր ոյժը և հասկանում է թէ իսկական եղն ինչ պէտք է անէ: Այդպէս է պատահում և մեզ հետ. ով ցանկանում է խելացի և խղճմտանքով ապրել, նա ինքը կը հասկանայ և կը զգայ թէ ինչն է պէտք և պատուաբեր իսկական մարդուն և կարող է, իհարկէ ոչ թէ միանգամից, այլ աստիճանաբար այդպիսի մարդ դառնալ: Ահա հարկաւոր է դրա համար հօգալ ու աշխատել և ոչ թէ իզուր տեղը վատնել ոյժն անմիտ և անպէտք բաներում:

XX

Ռ՞ԵՆ է հումարիս ազատութիւնը:

Ազատ կարելի է անուանել միայն այն մարդուն, ով ապրում է այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում: Խելացի մարդը միշտ ապրում է այնպէս, ինչպէս ինքն է կամենում և աշխարհիս վրայ ոչ ոք չի կարող

խանդարել նրան այդ բանում, որովհետև նա միայն այն է ցանկանում, ինչ որ կարելի է ձեռք բերել, ստանալ, և ահա հէնց դրա համար էլ խելոք մարդն ազատ է:

Ոչ ոք չի ցանկանում մեղաւոր լինել, ոչ ոք չի կամենում ապրել մնորուժեանց մէջ, ոչ ոք չի ուզում ընտրել իրեն համար դիտմամբ այնպիսի կեանք, որից նա տխրի, չարչարուի, տանջուի. ոչ ոք էլ չի ասի թէ նա ցանկանում է վատ և անառակ կեանքով ապրել: Նշանակում է, անկանոն կեանքով ապրող բոլոր մարդիկ ապրում են ոչ թէ իրենց ցանկացածի համաձայն, այլ իրենց կամքի հակառակ. նոքա չեն կամենում ոչ տխրութիւն, ոչ երկիւղ և այլն. բայց միևնոյն ժամանակ անդադար տանջւում և վախենում են. նրանք գործում են այն, ինչ որ չեն ցանկանում, հետևաբար ազատ չեն:

* * *

Իմաստուն Դեօգլինէսն ասել է. «Միայն նա է ճշմարիտ ազատ, ով ընդմիշտ պատրաստ է մեռնելու»: Նա դրեց պարսից թագաւորին. «Ըու չես կարող իսկական ազատ մարդկանց ստրուկներ դարձնել, ինչպէս և

չես կարող ստրկացնել ձկներին. երբ նոյն իսկ գերի վերցնես նրանց, նրանք ստրկութիւն չեն անի. բայց եթէ նրանք մեռնեն քեզ մօտ գերութեան մէջ, ի՞նչ օգուտ կը ստանաս դրանից.»։ Ահա այդ է ազատ մարդու խօսքերը. այսպիսի մարդը շատ լաւ հասկանում է թէ ինչու՞մն է իսկական ազատութիւնը։

* * *

Տես ստրուկն ինչպէս է ուզում ապրել։ Ամէնից առաջ նա ցանկանում է, որ իրեն ազատեն, իւր ազատ կամքին թողնեն, արձակեն. և կարծում է թէ առանց դրան չի կարող ոչ ազատ և ոչ էլ բախտաւոր լինել. նա այսպէս է ասում։

— Եթէ ինձ իմ ազատ կամքին թողնեն, ազատեն, ես ամբողջովին բախտաւոր կը լինիմ։ ստիպուած չեմ լինի իմ տիրոջ բոլոր քմահաճութիւնները կատարել և ոչ էլ ստրկանալ. կարող եմ խօսել ում հետ պէտք է, որպէս ինձ հաւասար մէկի հետ, կարող եմ գնալ ուր կամենում եմ, առանց սրան կամ նրան հարցնելու...։ Բայց հէնց որ նրան իւր ազատ կամքին թողնեն, ազատեն, իսկոյն

կը սկսի մարդկանց առաջ կեղծաւորել, որպէսզի հաց ճարել կարողանայ, որովհետև առաջուայ տէրն այլևս չի կերակրում...։ նա պատրաստ է մինչև անգամ ամէն մի ստորութիւն յանձն առնել։ Բայց հէնց որ իրեն համար բնակարան և օրուայ պարէնը ճարէ, կրկին անգամ կընկնէ ստրկութեան մէջ աւելի ծանր կերպով քան թէ առաջ էր։

Եթէ այդ տեսակ մարդը սկսում է հարստանալ, իսկոյն դառնում է իրեն համար սիրուհի մի ինչ որ անառակ կնոջ և ապա վերջն էլ սկսում է տանջուել և ողբալ. և երբ մի այլ առանձին դժուարութեան է հանդիպում, յիշում է իւր նախկին ստրկութիւնն ու ասում...։ չէ՞ որ դժուար չէր ինձ համար առաջուայ տիրոջս մօտ ապրելը. իմ մասին ոչ հոգս էի քաշում և ոչ աշխատում, բայց ինձ հագցնում, կերակրում էին...։ երբ հիւանդանում էի, հոգում էին իմ մասին. ծառայութիւնն էլ այնքան դժուար չէր...։ ես այն ժամանակ մի տէր ունէի, իսկ այժմ սրբան են նրանք...։ քանի՞ քանի՞ մարդկանց պարտաւոր եմ շողոքորթել որպէսզի հարստանամ։

Բայց ստրուկը խելքի չի գայ...։ նա ցանկանում է հարստանալ, դրա համար էլ համ-

բերում է ամէն մի ձախորդութեան. իսկ երբ ձեռք է բերում այն, ինչ որ ցանկանում էր, նշանակում է, որ թքտել, աղտոտելու ապականել է իրեն զանազան անվայել, անպատուաբեր գործերով:

Այսպէս թէ այնպէս նա խելքի չի գալիս. մտածում է. «Երբ մեծ հրամանատար դառնում, այն ժամանակ իմ դժուարութիւնը բոլորովին կը վերջանայ և ինձ ձեռքերի վրայ ման կածեն», և նա ուղևորւում, արշաւանք է գործում: Համբերութեամբ տանում է ամէն տեսակ զրկանքներ, տանջւում է սրպէս տաժանակիր. բայց և այնպէս խնդրում է վերստին դէպի մարտ երկրորդ և երրորդ անգամ:

Եթէ նա ցանկանում է փրկուել իւր բոլոր ցաւերից, անբախտութիւնից, թող սթափուի, զգուշանայ. թող լաւ հասկանայ թէ ինչումն է կեանքի իսկական բարիքը. թող իւր կեանքի իւրաքանչիւր քայլը բարութեան օրէնքների և ճշմարտութեան համաձայն շարժի, որ իսկապէս կնքուած կամ ընդգծուած է իւր հոգւոյ մէջ և նա անպատճառ կը սեպհականացնէ, ձեռք կը բերէ ճշմարիտ ազատութիւնը:

Մարդիկ դժբախտ են յատկապէս միայն նրա համար, որ ճշմարտութեան և բարութեան օրէնքների համաձայն չեն ապրում. և յաճախ չհասկանալով այս, իրենց դժբախտեան պատճառները ուրիշ բաների մէջ են փնտռում:

— Ես դժբախտ եմ, որովհետև հիւանդ եմ:

Սխալւում ես, դու դժբախտ ես նրա համար, որովհետև համբերութեամբ չես տանում քո հիւանդութիւնը:

— Ես դժբախտ եմ, որովհետև աղքատ եմ. առում է ուրիշը:

— Իսկ ես դժբախտ եմ, որովհետև ծնողներս չար են:

— Իսկ ես դժբախտ եմ. նրա համար, որ կեսաբը բարեհաճ աչքով չի նայում ինձ:

Ահա այդպէս են առում մարդիկ. բայց այս ամէնը ճիշտ չէ. նրանք դժբախտ են միայն նրա համար, որովհետև ապրում են ոչ այնպէս ինչպէս իրենց խելքը, բանականութիւնն է թերադրում, հրամայում է Երբ, օրինակ, մարդս մտածում է, թէ ինքը շատ և շատ բախտաւոր կը լինի, երբ կեսաբի բարեկամ դառնայ, չարաչար սխալւում է. որովհետև եթէ նոյն իսկ կեսաբ դառնայ, դարձեալ դրանով ոչ հանգիստ և ոչ էլ երջան

նիկ կամ բախտաւոր կը զգայ իրեն. չի կարող
առանց արգելքի ստանալ այն, ինչ որ ինքն է
կամենում:

Ազա մօտ եկ, կեսարի ընկեր, և ճշմա-
րիտն ասա մեզ. երբ ես աւելի հանդիստ
եղել, մինչև կեսարի հետ ընկերանալը թէ
այժմ:

— Ա՛խ, խնդրում եմ, մի ծիծաղիր վրաս,
դու երևակայել չես կարող, թէ ինչպէս եմ
տանջւում. ամէնեւին չեմ քնում. մէկ գալիս
ասում են, կեսարը վեր կացաւ, մէկ մօտս
են վազում հաղորդելու, թէ զբօսնելու է
դուրս գալիս և այլն. ինչքան հոգս, ինչքան
երկիւղ: Եւ ի՛նչ էք կածում. վախենում է
արդեօք կեսարի ընկերը, որ իրեն կը ծեծեն
որպէս մի ստրկի, երբ նա յանցանք գործէ.
ոչ երբէք. ընդհակառակը նա այդ բանը կը
համարէր ողորմութիւն. նա վախենում
է, յանցանք գործած ժամանակ, չլինի թէ
իւր գլուխը կտրեն, որովհետև գիտէ, որ
ազդեցիկ պաշտօնեաներին չեն ծեծում,
այլ ուղղակի մահուան են դատապար-
տում: Կարող եմ ձեզ հաւատազնել, որ
կեսարի բարեկամներէն չի գտնուի և ոչ մի
ճշմարիտ մարդ, որ չգանգատուի իւր վի-
ճակից և չաւի, ես տանջւում, չարչարում:

եմ մեծապէս այն պատճառով, որ մօտ եմ
կեսարին:

* *
*

Ո՞վ է ազատը, կը հարցնես դու, եթէ
ոչ կեսարն է ազատ և ոչ էլ նրա ընկերը:

Փնտուիք և կը գտնես. եթէ ցանկանում
ես օգտուել այն բանից, ինչ որ քեզանից
առաջ ճշմարտութիւն որոնող մարդիկ գտել
են, լսիր, տես ինչ են ասում նրանք:

Նրանք ասում են, որ մարդու համար
ամէնամեծ բարիքը իւր ազատութիւնն է.
եթէ ազատութիւնը բարիք է, ուրեմն
և ազատ մարդը չի կարող դժբախտ լինել
և այլն. նշանակում է, երբ տեսնում ես, որ
մարդը դժբախտ է, տանջւում, բորբոքւում է,
իմացիր, որ նա ազատ չէ:

Երբ տեսնում ես, որ մարդը ստորա-
նում է ուրիշների առաջ, ստում, չողօրօ-
թում է իմացիր, որ նա նոյնպէս ազատ չէ:

Նա է ստրուկ, ով աշխատում է միայն
կերակրի, արդիւնաւոր պաշտօնի համար. .
ով որ ձգտում է քիչ փառքի, նա մի քիչ էլ
ստրկանում է, իսկ ով աշխատում է մեծ
փառքի համար, նա աւելի շատ է ստորանում:

Ազատ մարդը տնօրինում է միայն այն, ինչ որ անարգել կերպով կարելի է անել. բայց իսկապէս մարդ միայն իւր անձի նկատմամբ կարող է անարգել կերպով տնօրինել. և երբ տեսնես, որ մարդ իշխում է ոչ թէ իրեն, այլ ուրիշներին, իմացիր, որ նա ևս ազատ չէ, այլ ստրուկ է դարձել մարդկանց իշխելու ցանկութեան:

Ինչքան էլ որ մարդ մեծ հուշակ ունենայ և ոյժ, այնուամէնայնիւ եթէ նա տէր է ճանաչում իւր վրայ մի ուրիշին, նոյնպէս ստրուկ է, և թէ նոյն իսկ իւր իշխանութեան ներքոյ ստրուկների մի ամբողջ բանակ ունենայ:

Եթէ ցանկանում ես իմանալ թէ այս մարդն ազատ է թէ ոչ, նրան շատ լաւ դիտիր և ամէնից առաջ իմացիր թէ ինչ է ուզում. և եթէ նա ցանկանում է այնպիսի մի բան, որ չի կարող ձեռք բերել, նա նոյնպէս ստրուկ է:

Եթէ մեզ թոյլ տանք ցանկանալ այն, ինչ որ ամբողջովին դուրս է մեր իշխանութիւնից, այն ժամանակ ամէնքն էլ մեր տէրերը կը լինին՝ ովքեր կարող են տալ կամ վերցնել մեզանից մեր ցանկացածը. այդպիսի տէրեր առհասարակ մենք շատ և շատ

կունենանք. որովհետեւ ըստ մեծի մասին ցանկանում ենք այնպիսի առարկաներ, որոնք գտնուում են ուրիշ մարդկանց իշխանութեան ներքոյ... մենք սիրում ենք հարստութիւն, փառք, արդիւնաբեր պաշտօն և այլն. և այն մարդիկ, որոնք կարող են տալ մեզ այս բոլորը, դառնում են մեր տէրերը:

Մենք վախենում ենք բանտերից, արեստաններից, մահից... և այն մարդիկ որոնք կարող են պատճառ դառնալ այս ամէնի և կամ ազատել, նոյնպէս դառնում են մեր տէրերը և այլն:

* * *

Որպէսզի մի որեւիցէ դորժ լաւ և ճշմարիտ կերպով կատարուի, հարկաւոր և անհրաժեշտ է լաւ իմանալ կատարելը, հասկանալ դորժի բոլոր հանգամանքները: Երբ ցանկանում ենք լաւ և արդար կեանքով ապրել, պէտք է ցանկանանք և կարողանանք ազատ ապրել. բայց որպէսզի ազատ ապրել սովորենք, ամէնից առաջ պէտք է լաւ մտածենք և մանրամասն քննենք թէ ինչ բան է ազատ կեանքը. փորձենք և սկսենք հասկանալ այդ:

Ամէնից առաջ կը հասկանանք, որ ազատ չի կարող լինել այն մարդը, ով կամենում է այն, ինչ որ ոչ թէ իւր, այլ ուրիշների իշխանութեան, իրաւունքի ներքոյ է. ուշադրութեամբ դիտիր քո կեանքը և տես, նա ամբողջովին գտնուում է քո իշխանութեան ներքոյ, թէ միայն մի փոքր մասն է քո իրաւունքի տակ գտնուում: Ենթադրենք, օրինակի համար, թէ ցանկանում ես, որ քո մարմինը առողջ, անմլաս և գեղեցիկ լինի. բայց չէ որ այս ցանկութիւնների իրադործումը քեզանից չի կախուած. ճիշտ նոյն կերպով դու անգոր ես քո մարմնի մահուան նկատմամբ. նշանակում է մարմինդ քո իշխանութեան տակ չէ, այլ ուրիշի, այսինքն նրա, ով աւելի ուժեղ է նրանից: Միթէ քեզանից է կախուած—կամ կարող ես ձեռք բերել երկրի մի որևիցէ պողաբէր մասը, երբ դու կօպէկ չունիս այն գնելու. երբ միջոց չունիս չես կարող ստանալ նոր հագուստ, տուն, սարուկներ, ձիաներ և այլն. դու չես կարող այնպէս անել որ օրգիներդ, կինդ, եղբայրներդ, բարեկամներդ առողջ և ըստ ամէնայնի համաձայն լինին քեզ հետ:

Այս ամէնը քո իշխանութիւնից դուրս է. բայց միթէ չունիս այնպիսի բան, որի նը

կատմամբ կատարեալ ինքնիշխան լինիս, այնպիսի մի բան, որ քեզանից խլել, վերցնել կարելի չէ:

Թափանցիր թէկուզ հէնց քո կեանքի խորքը և ասա ինձ, կարո՞ղ է արդեօք երկրի վրայ մէկն ու մէկը ստիպել քեզ հաւատալ նրան, որին կեղծ ես համարում:

Ո՛չ:

Նշանակում է հաւատոյ դործում ոչ ոք չի կարող ստիպել: Ասա նոյնպէս, կարո՞ղ է մէկն ու մէկն ստիպել քեզ, որ ցանկանաս գործել այն, ինչ որ վճռել ես չգործել:

— Իհարկէ կարող է, երբ սպառնայ բանտով կամ մահով. բայց եթէ դու չվախեանայիր ոչ բանտից և ոչ էլ նոյն իսկ մահից:

— Այդ արդէն ուրիշ բան է..

Իայց միթէ քո կամքից չի կախուած բանս կամ մահ արհամարհելը..

— Այո—իմ կամքից է կախուած.

Ուրեմն մեր կամքից է կախուած ցանկանալը և չցանկանալը:

Ենթադրենք այդ այդպէս է. բայց ահա, օրինակի համար, ցանկանում եմ զբօսնելու գնալ, մի ուրիշը կանգնեցնում է ինձ և չի թողնում:

Իայց միթէ նա կարող է կանգնեցնել

քո զբօսներու ցանկութիւնը..

— Միևնոյն է, նա կանգնեցնում է ինձ.

Ո՛չ, այդ միևնոյն չէ. ցանկութիւններդ քո իրաւունքի, իշխանութեան ներքոյ են և ոչ ոք, բացի քեզանից, չի կարող փոխել. իսկ մարմինդ ոչ միայն մարդկանց, այլ և ամէն մի պատահարի ենթակայ է:

Մի քար, օրինակի համար, կարող է վայր ընկնել վերևից և վշրել գլուխդ ու մարմինդ:

— Այդ, ենթադրենք, ճշմարիտ է, բայց և այնպէս իմ զբօսներս արդեւեցին:

Ես չասացի թէ զբօսներն առանց միտքից քեզ արդեւքի քո իշխանութեան ներքոյ է. այլ ասացի թէ, քո կամքից է կախուած զբօսներու և չզբօսներու ցանկութիւնը.. և այլն:

Համոզուած ես, որ ոչ ոք չի կարող հարկադրել քեզ ցանկանալ այն, ինչ որ չես ցանկանում:

— Այո՛.

Կարո՞ղ են քեզ ստիպել, որ գործես այն, ինչ որ չես ուզում:

— Ոչ.

Ուրեմն եթէ ցանկանաս միայն այն, ինչ որ քո իշխանութեան ներքոյ է, այն ժամանակ չեն կարող խանգարել կամ արգելել քեզ:

— Բայց մթթէ նոյն իսկ, օրինակի համար, չպէտք է ցանկանամ առողջութիւն:

Յանկանալ նոյն իսկ մի չնչին բան, ոչ թէ առողջութիւն, այնքան անմտութիւն, անխելքութիւն է, որքան ընդհանրապէս ցանկանալ այն, ինչ որ մեզանից չի կախուած.. ինչ որ ինձանից չի կախուած, այդ չեմ էլ կարող իմ կամքով ոչ ձեռք բերել և ոչ էլ պահել, պահպանել. հէնց դրա համար էլ նա ինձ չի պատկանում:

Բայց ահա այս ձեռքը մթթէ իմը չէ:

Այդ քո մարմնի մասն է. իսկ ամբողջ մարմինդ հող և փոշի է և դանուում է ամէնքի իշխանութեան տակ, ովքեր նրանից ուժեղ են: Նայիր քո մարմնին, ինչպէս մի բեռնակիր իշուկի, որ պարտաւոր է ծառայել քեզ որքան որոշուած, սահմանուած է. ուժեղները ցանկանում են վերցնել, խլել քեզանից քո իշուկին, տուր առանց ընդիմանալու և գանգատուելու. եթէ հակառակես, կամ կը փորձես հակառակել, կը ծեծեն քեզ և այնուամէնայնիւ էլի կը վերցնեն, կը խլեն իշուկին: Երբ այսպէս պէտք է նայենք մեր մարմնին, տեսէք ուրեմն սրբան չնչին է այն, ինչ որ հայթայթուում, ձեռք է բերում ի սէր մեր մարմնի — մեր մարմինը բեռնակիր ի-

չուկ է, իսկ ինչ որ հարկաւոր է մարմնին, ոչ այլ ինչ է եթէ ոչ կերակուր, մսւր և սարք այդ իշուկի:

Մարմինը ոչնչութիւն, դադարի բան է խելօք մարդու համար, իսկ այն ինչ որ հայթայթուում է ի սէր մարմնի, ևս առաւել դադարի է:

Շուտով ազատուեցէք այդ դադարի բաների իշխանութիւնից հեշտութեամբ և հանդիսս սրտով:

* * *

Երբ կը սովորես և կընտելանաս տարբերել թո սեպհականութիւնն ուրիշի սեպհականութիւնից, այն բանը, որը կարելի է ձեռք բերել, նրանից որին չի կարելի հասնել, երբ կը հասկանաս, որ քեզ համար կարևոր է միայն քոնը, իսկ մնացածները դադարի բաներ են, երբ կը ցանկանաս միայն այն, ինչ որ քեզանից է կախուած, այն ժամանակ քեզ համար ոչինչ սարսափելի բան չի լինի, ոչ ոք էլ թո սեպհականութեան տէր չի կարող դառնալ, ոչ ոք չի կարող խլել քեզանից քոնը, ոչ ոք ոչ մի բանի մէջ չի խանգարի. ինչպէս որ անկարելի է

խոչնդոս հանդիսանալ Աստուծոյ դորձերին, այնպէս էլ չի կարելի արգելել, յետ կանգնեցնել քեզ քո բարի ձգտումներից: Նշանակում է, որ առանց ցաւի, յուզմունքի ապրելու հնարաւորութիւն կայ:

Մարդիկ վշտանում են միայն այն ժամանակ, երբ իրենց հետ պատահում է այն, ինչից որ վախենում են, իսկ դու ոչնչից մի վախենայ, ոչ ոքին մի նախանձի, ապրիր հանգիստ, ցանկացիր միայն այն, ինչ որ քո կամքից է կախուած, ինչ որ ազնիւ է և ինչ որ քո ձեռքի տակ է: Բայց այն ինչ որ վիճակուում է քեզ ուրիշների կամքով, ընդուսնիր որպէս պարզ և բարի մարդկանցից և օգտուիր այն չափով, ինչ չափով անհրաժեշտ կամ պէտք է կեանքի պահպանութեան համար:

Եթէ ուրիշներից ոչ մի ակնկալութիւն չունես, այն ժամանակ մարդիկ չեն կարող սարսափելի լինել քեզ համար, ինչպէս մեզուն սարսափելի չէ միւս մեզուի համար, ինչպէս ձին սարսափելի չէ մի ուրիշ ձիու համար, իսկ եթէ քո երջանկութիւնը կամ բախտն ուրիշների ձեռքումն է, այն ժամանակ անպատճառ կը վախենաս մարդկանցից: Ահա հէնց այդ բանից էլ պէտք է սկսել:

պէտք է հեռանալ այն ամէնից, ինչ որ մերը չէ և մերժել, հեռանալ այնքան, որ նա մեր տէրը չկարողանայ դառնալ, հրաժարուել մեր մարմնին ծառայելուց և առհասարակ այն ամէնից, ինչ որ պէտք է նրան. չպէտք է հարստութիւն սիրենք, փառքի ձգտենք, պաշտօնների և պատիւների ետևից ընկնենք. ճիշտ նոյն մտքով մարդ պէտք է հեռանայ իւր օրդիներից, կնոջից, եղբայրներից. պիտի ասէ ինքն իրեն, որ այս ամէնը մեր սեպհականութիւնը չէ:

Այն ժամանակ հարկադրուած չենք լինի մարդկային բռնութիւնը բռնութեամբ ոչնչացնել: Ահա բանտը, ինչ փնտս է տալիս ինձ, իմ հոգուն. ինչո՞ւ համար քանդեմ, ինչո՞ւ համար բռնութեամբ յարձակուեմ մարդկանց վրայ և սպանեմ նրանց. նոցա բանտերը, շղթաները, զէնքը իմ հոգուն չեն կարող փնտսել. մարմինս կարող են վերցնել, բայց հոգիս ազատ է. նրան և ոչ ոք ոչ մի բանի մէջ չի կարող խանգարել. դրա համար էլ ապրում եմ այնպէս, ինչպէս ես եմ ցանկանում:

Բայց ինչպէս եմ հասել սրան. ահա թէ ինչպէս. իմ կամքը ենթարկել, հնազանդեցրել եմ Աստուծոյ կամքին. ցանկանում է

Նա, որ ես դողացնեմ, ես ևս ցանկանում եմ այդ. կամենում է Նա, որ դորժեմ, անեմ այս և ոչ թէ այն, ես էլ նոյնն եմ ցանկանում. կամենում է Նա, որ ինձ հետ մի օրիցէ բան պատահի, ես էլ նոյնն եմ ուզում: Ձի՞ կամենում Նա, ես ևս չեմ կամենում. կամենում է Նա, որ ես մեռնեմ, որ ինձ ենթարկեն տանջանքի և այլն, ես ևս ցանկանում եմ մեռնել, ցանկանում եմ տանել այդ տանջանքը:

* *

Երբ մեծ ճանապարհի վրայ աւազակները թալանում են անցորդին, այն ժամանակ ճանապարհորդն այլևս մէնակ չի շարունակում իւր ուղին, այլ սպասում է, որ պահապաններից մէկն ու մէկը դնայ, որպէսզի ինքն էլ ընկերանայ և տեղ հասնի անվտանգ կերպով:

Այդպէս է վերաբերում իւր կեանքում խելօք մարդը. նա ասում է իրեն. կեանքը լի է փորձանքներով. ո՞րտեղ պահպանութիւն վնասենք, ինչպէս հեռանանք, ազատուենք այս ամէնից, ո՞րպիտի թանկագին ընկերոջ սպասենք անվտանգ գնալու համար. որք ետևից դնալ, որո՞ւ թէ մի ուրիշի. արդեօք

հարստի, իշխանաւորի, թէ իրեն կետարի ետեւից... Սոցանից ոչ մէկն էլ ինձ չի կարող վրկել, որովհետեւ սրանց ևս կողոպտում, սպանում են. նրանք ևս լաց են լինում, գժբախտանում են և այլն:

Այն, կարող է պատահել, որ հէնց այն մարդը, որի ետեւից գնամ, յարձակուի ինձ վրայ և թալանի: Միթէ ուրեմն չեմ կարող մի հաւատարիմ և ուժեղ ու թանկագին ընկեր գտնել, որ երբէք չյարձակուի ինձ վրայ, այլ իմ պաշտպանը լինի... սւմ ետեւից գնամ: Խելօք մարդը կը պատասխանէ, որ ամէնից անվտանգ ճանապարհն Աստծոյ ետեւից գնալն է:

Բայց ի՞նչ է նշանակում դնալ Աստծոյ ետեւից:

Այդ նշանակում է, ցանկանալ այն, ինչ որ նա է կամենում և չցանկանալ այն, ինչ որ նա չի կամենում:

Բայց ի՞նչպէս հասնել այդ բանին:

Թափանցելով աստուածային տնօրէնութեանց մէջ և սովորելով նրա օրէնքները, որոնք ընդգծուած են քո հոգու մէջ:

* *
*

Աստուած ի՞նչ բան է տուել ինձ, որը գտնուում է իմ իշխանութեան ներքոյ, որի վրայ ես լիազօր տէր եմ, և ի՞նչն ընդհակառակը թողել է իւր կարգադրութեան:

Նա տուել է ինձ միտք և կամք, որոնք կախուած են միմիայն ինձանից. մտքի և կամքի համար ոչ արգելք և ոչ էլ բռնութիւն կայ: Լաւ, իսկ իմ մարմինը, նա իմ իշխանութեան տակ չէ. նա ինձ շրջապատող մարմնական կեանքի մի մասն է կազմում և ենթարկուած է աշխարհի ընդհանուր օրէնքներին այնպէս, ինչպէս այն ամէնը, ինչ որ մարմնական է, ինչո՞ւ համար աշխատել սեպհականել այն, ինչ որ գրւում է ինձ ժամանակաւոր կերպով... մենք պէտք է բաւականանք մեր ունեցածով:

Բայց ինչո՞ւ է վերցնում Աստուած ինձանից այն, ինչ որ ես ստացել եմ:

Ի՞նչ անենք որ, ինչո՞ւ համար հակառակել այդ բանին, անմտութիւն կը լինի իմ կողմից ինձնից ուժեղի դէմ կռուելը. Երբ ծնուել եմ, ոչինչ չեմ ունեցել. բոլորը ստացել եմ իմ հօրից, իսկ նա՛ ուրիշ մարդկանցից, իսկ նրանք էլ Աստծուց: Աստուած ստեղծել է արեգակը, երկիրը իւր բարեբներով և բնակեցրել է մարդկանց այդ երկրի վրայ

միաբան, խաղաղ և սիրով կեանք վարելու համար:

Լաւ մտածիր. ամէն ինչ Աստուց ես ստացել և մեղադրում ես Նրան, երբ մի ինչ որ բան քեզանից վերցնում է. բայց ո՞վ ես դու, ինչո՞ւ համար ես ապրում երկրի վրայ, Աստուած չի բերել քեզ այստեղ, Նո՞ չէ արդեօք քեզ ստեղծել և պարգևել խելք ու մարմին, Նո՞ չէ շրջապատել քեզ բարիքներով, որոնցից օգտւում ես...:

* *
*

Բայց Աստուած քեզ սրպիսի գրութեամբ է ստեղծել. դու ստեղծուել ես էութեամբ մահկանացու. պէտք է ապրես մարմնի մէջ այնքան ժամանակ, որքան որոշուած է. ապրելով տեսնում և զգում ես, թէ ինչպէս է կառավարում Աստուած աշխարհը. կարծես թէ եկել ես Աստուաց սահմանուած հանդիսին ներկայ լինելու. մի՞թէ պէտք է բարկանաս, երբ Աստուած հանէ քեզ այդ հանդիսից:

Բայց կը ցանկանայի հանդիսում էլ աւելի ապրել:

— Բո դժբախտութիւնը, ցաւը հէնց դրա

մէջ է. ենթադրենք օրինակ, թէ մի որեւիցէ անդադրում կամ անվերջանալի հանդէս կայ. մարդ իկ նայում և լսում են. հանդէսը դիւր է դալիս նրանց ու այլնս չեն ցանկանում դուրս դալ և կամ զիջանել իրենց տեղն ուրիշներին. իսկ ամէնքն էլ չեն տեղաւորւում. եթէ դու պատուաւոր մարդ ես, պէտք է անխօս կերպով հեռանաս իւր ժամանակին. չէ որ միւս հիւրերն էլ են կամենում տեսնել և լսել նոյնը. և այլն:

— Բայց ցաւում եմ, որ կինս և երեխաներս պիտի մեռնեն:

Մի՞թէ նրանք քսնն են, այլ ոչ թէ Նրան, ով նրանց ստեղծել է. մի՞թէ քո Տիրոջ չես ուզում զիջանել, տալ այն, ինչ որ քեզ չի պատկանում, այլ Իրեն:

— Բայց նա ինչո՞ւ համար է ինձ կեանք տուել այսպիսի պայմանների մէջ:

Ի՞նչպէս դու ապերախտ ես. թող դանդատուելդ և Աստուծն մեղադրելդ. մի անիծիր բախտդ, յիշիր, որ դժբախտութիւնից պահպանուելու շատ միջոցներ ես ստացել. դու ստացել ես բարի սիրտ, պայծառ միտք և ոյժ ազատ լինելու:

— Աստուած ինչո՞ւ համար է շրջապատել ինձ այդքան հրապուրիչ պարգևներով:

Նրա համար, որ դու նրանցից օգտուես:
Այդպէս է, բայց միթէ երկար ժամա-
նակով:

— Բայց նրանք ինձ համար անհրա-
ժեշտ են:

Նրանց անհրաժեշտ մի համարիր. մի
կապուիր նրանց հետ և նրանք քեզ համար
անհրաժեշտ բաներ չեն լինի:

Ահա հէնց այդ տեսակէտից էլ պիտի
նայես այն ամէնին, ինչ որ մարմնական է.
սկսիր ամէնահասարակ առարկաներից, օրի-
նակի համար, քո կաւեայ ամանից, յետոյ
հասիր քո հագուստին, շանը, ձիուն, քո
գաշտին, յետոյ էլ քեզ, քո մարմնին, երե-
խաներին, կնոջ, եղբայրներին: Աղատիր քեզ
այդ ծայրայեղ կապերից այն ամէնի նկատ-
մամբ, ինչ որ քեզ չի պատկանում, որպէսզի
ստիպուած չլինիս տանջուել, երբ նրանց
չունենաս:

Վարժուիր դրա մէջ ամէն օր, բայց մի
կարծիր, որ դու դրանով իմաստուն դար-
ձար, այդ դովասանք կը լինի, այլ միայն
ասան, որ դու զբաղուած ես սեպհական անձի
ազատութեամբ, որովհետեւ հէնց այդ բանի
մէջ է գտնուում գէպի իսկական ազատու-
թիւն տանող ճանապարհը:

Բայց ահա այս մարդը կարող է չղթա-
յակապ անել և քերթել իմ կաշին:

Նա դրա համար պատիժ կը ստանայ,
որովհետեւ մի օրեիցէ անարդարացի բան
գործողը չի կարող անպատիժ մնալ:

Ի՞նչ ես ասում. երբ, օրինակի համար,
տէրը կապում և ծեծում է իւր ստրկին,
չի պատժուում: Այդ քեզ միայն այդպէս է
թուում. պատիժ չէ միթէ, երբ մարդ իւր
նմանին, ուրեմն իւր եղբօր չղթայակապ է
անում: Այս բոպէին կը հասկանաս այդ-
ամէն մի ծառի համար վատ է, երբ նրան ստի-
պեն ածել ոչ այնպէս ինչպէս իրեն համար
որոշուած է, նոյնն է և բոլոր կենդանիների
համար. բայց մարդկանց համար ի՞նչպէս է
որոշուած, ո՞վ կասէ թէ մարդը պէտք է կծէ,
աքացէ, յարձակուի ուրիշների վրայ, մարդ-
կանց բանտ նստեցնի, նրանց գլուխները
կտրի և այլն. չէ որ մարդը վայրենի գա-
ղան չէ:

Ամէնքն էլ կասեն ընդհակառակը, թէ
մարդ պէտք է ըստ ամէնայնի մարդու լաւը
ցանկանայ, բարութիւն անի և օգնի: Նշա-
նակում է, նա ով ընդհակառակն է գործում,
չի կատարում իւր պարտքը և վնասում է
հէնց իրեն: Սոկրատէսին մահուան դատա-

պարտեցին. վնասը կամ չարիքը ըստ մեծի մասին ոչ թէ Սոկրատեսի, այլ նրա դատաւորների և սպանողների համար էր:

— Այդ կարծես մի քիչ անհասկանալի է:

Չէ՞ որ երբ քրաղաղներին կռուեցնում են, յաղթող են համարում այն քրաղաղին, որը թէև ամբողջովին վիրաւորուած և արիւնոտ է, բայց տանում է յաղթութիւնը: Իսկ երկու մարդկանցից ո՞րն է յաղթող հանդիսանում. նա արդեօք, ով չարչարում և սպանում է ուրիշին, թէ նա, ով համբերութեամբ և առանց բարկանալու տանում է չարչարանքները և մահը. ինչո՞ւ յաղթող արաղաղի մասին ուղիղ ես դատում, իսկ յաղթող մարդու մասին չես կարողանում դատել: Մի՞թէ բարի և ազնիւ մարդը բարձր և առաւել չէ չար և անպատիւ մարդուց: Իսկական չարիք է մարդու համար, երբ նա դայլ, օձ դառնայ. այսպիսի գրութիւնը մարդու համար ամենաամօթալի և խղճալի է:

Յիշե՛ք կրկին անգամ ինչի մէջ մենք քեզ հետ համաձայն ենք: Ազատ է այն մարդը, որի համար ոչ մի արդելք չկայ և ամենայն հեշտութեամբ ձեռք է բերում այն, ինչ որ իրեն պէտք է: Ստորուկ է նա, որին խանդարել և նոյն իսկ ստիպել կարելի է, որ իւր

կամքին հակառակը գործէ:

Եթէ իսկապէս կարողացար անկեղծ կերպով և ի բոլոր սրտէ ասել, Տէր Աստուած իմ, տար ինձ այնտեղ, դէպի ուր դու ես ցանկանում, նշանակում է, ուզում ես ազատուել ստրկութիւնից և դառնալ ազատ մարդ:

* *
* *

Յաճախ ինձ հարցնում են, իսկ դու ինքդ, Էպիկտետ, քեզ ազնաւ ես համարում:

Աստուած տեսնում է, որ ցանկանում եմ ազատ լինել և ամբողջ ուժով աշխատում եմ դրա համար, բայց իհարկէ կատարեալ ազատութեան դեռ չեմ հասել. ես թանկ եմ գնահատում իմ մարմինը և շատ եմ ցանկանում, որ նա անվնաս մնայ, չնայած որ նա վաղուց է վնասուած. բայց եթէ ձեզ իսկական ազատ մարդկանց օրինակներ են պէտք, իմացած եղէք, որ այդ տեսակ մարդիկ եղել են. նշանակում է ազատութիւն ձեռք բերելը հնարաւոր է:

Յիշեցէ՛ք, օրինակի համար, Դիօգինէսին. նա ազատ էր ոչ թէ իւր ծագմամբ (նրա ծնողներն ազատ չեն եղել), այլ նրա համար,

որ ազատել է իրեն այն ամէն բանի հետ կապ ունենալուց, որը տանում է դէպի ստրկութիւն. նրան ստրկացնող ոչ մի պատճառ չկայ. ամէն բանից կարողացաւ հրաժարուել, որովհետեւ ամէն բանի հետ էլ կապուած էր շատ բարակ թելով: Նա ասում էր. «Ես ազատ եմ, որովհետեւ ինձ ոչինչ հարկաւոր չէ. մարմինս իմը չեմ համարում, ինձ համար Ասածոյ օրէնքն ամէն բան է. իսկ մնացեալներն ոչ մի նշանակութիւն չունին»:

Սովորատէսը նոյնպէս ազատ մարդ էր. նա չվախեցաւ մահից և լսեց իւր խղճի ձայնին մինչև անգամ և այն ժամանակ, երբ այդ բանի համար նրան հալածում էին և նոյն իսկ մահ էին սպառնում: Երբ նրա բարեկամներն առաջարկեցին բանտից փախչել, նա չկամեցաւ խարդախութեամբ փրկել իւր կեանքը և կարողացաւ, երբ հարկաւոր էր, իւր սեպհական մահով ապացուցանել մարդկանց այն ամէնը, ինչ որ իւր կեանքի ընթացքում սովորեցրել էր:

* *
*

Այդ տեսակ մարդկանց անընդհատ յիշիր. նոցա խօսքերը և նոցա կեանքի օրինակը կառաջնորդեն քեզ դէպի ճշմարիտ ազատութիւն. բայց իմացիր, որ եթէ իսկապէս ուզում ես ազատ լինել, պէտք է միշտ պատրաստ լինես տալու Ասածուն այն, ինչ որ նրանից ես ստացել. ոչ թէ միայն պատրաստ պիտի լինիս մահուան, այլ և ամէնաանտանելի չարչարանքի և տանջանքի. ինչպէս յաճախ պատահել է, որ ամբողջ քաղաքներ և ժողովուրդներ իրենց կեանքը տուել են ոչ թէ ճշմարտութեան, այլ կեղծութեան, աշխարհային ազատութեան համար. քանի՛ քանի՛ մարդիկ անձնասպան են եղել, որպէսզի իրենց ազատեն կեանքի հոգսերից. եթէ կեղծ փառքը ձեռք է բերւում այդպիսի զոհերով, այն ժամանակ ինչ կայ զարմանալու, երբ իսկական ազատութիւնը ձեռք է բերւում դժուարութեամբ և մարմնական տանջանքով. իսկ եթէ դու քո ազատութեան համար այդպիսի դին վճարել չես ցանկանում, այն ժամանակ ամբողջ կեանքումդ ստրուկ կը մնաս ստրուկների մէջ, եթէ նոյն իսկ աշխարհային բոլոր պատիւներին արժանանայիր, եթէ կեսար անգամ դառնայիր:

Այն՝ ինչով մարդիկ սքանչանում են, այն՝ որին ձեռք բերելու համար նրանք այնքան յուզւում և շարժարւում են, այդ ամէնը նոցա մի չնչին երջանկութիւն անգամ չէ տալիս. քանի որ մարդիկ շարժարւում են, կարծում են, որ իրենց բարին հէնց այն է, ինչի որ ձգտում են. բայց հէնց որ ստանում են իրենց ցանկացածը, կըրկին սկսում են յուզուել, վշտանալ և նախանձել այն բանի համար, ինչ որ դեռ չունին: Եւ այդ շատ հասկանալի է, որովհետեւ ազատութիւնը ձեռք է բերւում ոչ թէ անմիտ ցանկութեանց բաւականութիւն տալով, այլ ընդհակառակն՝ իրեն անկախ դարձնելով այդ տեսակ ցանկութիւններէ: Եթէ կամենում ես ստուգել և համոզուել, փորձիր գործադրել քո անմիտ ցանկութիւններէ ազատուելու համար գոնեա կիսով չափ այնքան աշխատանք, որքան մինչև այժմ գործադրել ես նոցա ի կատար ածելուն համար. և ինքդ շուտով կը տեսնես, որ այդ միջոցով աւելի շատ հանգստութիւն և երջանկութիւն կը ստանաս:

Թող հարուստ և իշխելու ցանկութիւն ունեցող մարդկանց հասարակութիւնը, դադարիր ուժեղ և յայտնի մարդկանց հաճո-

յանալուց, և մի կարծիր թէ նրանցից կարող ես ստանալ քեզ համար մի ինչ որ օգտակար բան:

Ընդհակառակը, խնդրիր ճշմարտասէր և խելացի մարդկանցից այն, ինչ որ կարող ես ստանալ նոցանից և հաւատացնում եմ քեզ, որ դադարեցնեն յետ չես դառնայ նրանցից, եթէ միայն նոցա մօտ գնաս մաքուր սրտով և բարի նպատակներով:

Եթէ իմ խօսքին չես հաւատում, գոնեա մի առժամանակ փորձիր բարեկամանալ այդ տեսակ մարդկանց հետ, աշխատիր գոնեա մի քանի քայլ անել դէպի ճշմարիտ ազատութիւնը, եւ այն ժամանակ դու ինքդ վճռիր, ինչն է քեզ աւելի դրաւում, բարիքը և ազատութիւնը, թէ՛ շարիքն ու ստրկութիւնը:

Չէ որ այդպիսի փորձում ոչ մի ամօթալի բան չկայ: Իէհ, ուրեմն փորձիր:

XXI

Ինչո՞ւ համար պէ՛տ է կարգալ գրեք:

Հարստութիւն կամ իշխանութիւն ձեռք բերելու ցանկութիւնը չէ միայն, որ խանդարում է մեր հանգիստ ապրուստը, այլ և ու-

րիչ այլ ցանկութիւններ, որինակի համար, պարտալ ժամանակ անցկացնելու, ճանապարհորդելու, գրքեր կարգալու ցանկութիւնը, միով բանիւ դէպի այն ամէնը, ինչ որ մեզանից գուրս է, ինչ որ մեզ պէտք չէ, որի պատճառով ընկնում ենք ուրիշի իշխանութեան ներքոյ:

Անխելք մարդիկ շատ անգամ կարծում են, թէ իրենք անբախտ են, երբ հարկադրուած են շատ գրել կամ կարդալ և կամ ընդհակառակը, բոլորովին զրկուած են գրելուց և կարդալուց:

Եթէ քո գրել կարդալուց գոհ չես, էլ ինչո՞ւ է պէտք, ո՞չ, գոհ եմ. բայց չեմ կարողանում տանել, երբ արգելք են հանդիսանում իմ բաւականութեան:

Այդ ինչ տեսակ բաւականութիւն է, երբ նրան խանգարել կարող են:

Ես պէտք է ջանամ ոչ թէ ինձ, այլ ուրիշներին ծառայել, միշտ պէտք է պատրաստ լինիմ մարդկանց օգնելու և այն ինչ որ խնդրում են, երբ ես կարող եմ, խղճի մտօք ցոյց տալու. երբ սկսեմ անընդհատ աշխատել ուրիշների համար, չեմ ցաւիլ երբ չյաջողուի մի որևիցէ գիրք գրել կամ կարդալ, ճիշտ այնպէս ինչպէս քաղցած ժամա-

նակ չեմ ավաստում, որ սւտում եմ և ոչ թէ գրում կամ կարդում: Միայն նա ով ցանկանում է, որ մարդիկ իւր գիտութիւնն ու խելքը գովեն, կը սկսէ գրքեր գրել կամ կարդալ հէնց այն ժամանակ, երբ օգնութեան կարօտը խնդրում է գործով օգնել:

Գիրք կարդալը գործ չէ, այլ նախապատրաստութիւն դէպի գործը. երբ առիթ է ներկայանում մարդկանց գործով օգնելու, պէտք է անհրաժեշտաբար ընդհատել նոյն իսկ ամէնալաւ և օգտակար գրքի ընթերցումը. չէ որ այդպիսի գրքերը գրւում են նրա համար, որ ընթերցողին ըստ ամէնայնի ընդունակ դարձնեն բարի և օգտակար գործերի. ուրեմն երբ դէպքը բերում է ինձ գործով ցոյց տալ այն, ինչի համար պատրաստում եմ. չպէտք է պատճառաբանեմ, թէ գրում կամ կարդում եմ, այլ ուղղակի գործով պիտի օգնեմ:

Եթէ գրքերը կարդում ենք նրա համար, որ սովորենք թէ ինչպէս պէտք է աւելի լաւ ապրել, ամէնևին չենք ավաստալ, երբ մեզ խանգարեն: Պէտք է այնպիսի գիրք կարդալ, ուր խօսուի մեր կամքի մասին, միայն նրա համար, որ սովորենք կառավարել նրան. գիրք՝ մեր ցանկութիւնների վերաբերեալ,

որպէսզի հասնենք մեր ցանկացածին և իսկապէս ցանկանանք այն, ինչ որ պէտք է կամ արժէ. գիրք՝ մեր պարտականութիւնների մասին, որպէսզի երբէք զանցառութեան չտանք և չխուսափենք նրանցից: Եթէ գրքերն այդ նպատակով կարգանք, այն ժամանակ չենք բարկանայ, երբ մեր ընթերցումն ընդհատեն. այլ ընդհակառակը կուրախանանք, որ առիթը ներկայացաւ գործի նկատմամբ վերաբերուել այնպէս, ինչպէս սովորեցնում են մեզ լաւ գրքերը: Դու այնքան գրաւուած ես լաւ գրքերի ընթերցանութեամբ, որ ցաւում ես երբ մարդիկ ընդհատում են քո ընթերցումը:

— Դու ծիծաղում ես դադարի մարդկանց վրայ, որոնք ուրախանում են դադարի զուարթութիւններով և մտածում կամ կարծում ես թէ օգտակար գիրք կարդալը երբէք դադարի բան չէ. ամէնից աւելի ծիծաղիր քեզ վրայ, որովհետև օգտակար գիրք կարդալ միայն իւր օգտի համար, այնպէս ինչպէս դու ես կարդում, նոյնպէս դադարի, անօգուտ և ունայն է:

Եւ դու չես կարող ասել. «Թող լինի այնպէս, ինչպէս հաճելի է Աստծուն» այլ կասես՝ «՛հ, ես շատ անբախտ եմ, ցանկա-

նում եմ գեղեցիկ և օգտակար գրքերի ընթերցանութեամբ զբաղուել, բայց խանդարում են և պատճառ դառնում ակամայ կերպով կատարելու այս կամ այն ձանձրալի մարդու խնդիրքը:

— Բայց միթէ, պատասխանում եմ քեզ, քո պարտականութիւնը հէնց այն է, որ դրքեր կարդաս այն ժամանակ, երբ քեզանից օգնութիւն խնդրեն. պէտք է իմանաս և հասկանաս մի բան, թէ ինչ է կամենում Աստուած, որ կատարես և ինչ չի կամենում: Աստուած քեզ առանձնական կեանքով ապրելու հնարաւորութիւն է տուել, որպէսզի ինքդ քեզ ու քեզ լաւ խորհուրդանես, կարգաս, գրես և պատրաստուես բարի գործի. բայց այսօր նա քեզ մօտ ուղարկեց այնպիսիներին, որոնք խնդրում են գործով օգնել իրենց, ահա հէնց այդպիսի մարդուն Աստուած ասում է, — Դուրս եկ առանձնութիւնից և գործով ցոյց տուր այն, ինչ որ սովորել ես, որովհետև հասել է ժամանակը և քեզ և մարդկանց տեսնելու այն բանի օգուտը, ինչի մասին կարդացել և մտածել ես:

Երեսիդ վրայ չընկնես ցելսի մէջ. չաբրտընջաս երբ մարդիկ ընդհատեն քո զուար-

ճութիւնը, պարապմունքը, չէ որ դու նրանց
օգնելու համար ես ծնուած եւ ինչի պէտք
էին այն գրքերը, որոնք սովորեցնում են թէ
ինչպէս պէտք է մարդկանց օգնել:

* *
*

Ուրիշներին սովորեցնելու ցանկութիւն
ունենալուց առաջ, լուրջ դիտիր քո կեանքը,
ճանաչիր առաջ ինքդ քեզ. մի մտնիր ու-
սուցչական դժուար ասպարէզը, երբ Աս-
տուածանից չի դրուած քեզ այդ ընդունա-
կութիւնը, շնորքը, երբ խորապէս համոզուես,
որ ոչ թէ քո անձնական զուարճութեան հա-
մար ես ուսուցանում մարդկանց, այլ Աս-
տուած է կոչել քեզ ուսուցչութիւն անելու,
այն ժամանակ միայն գնահատելի ճանապար-
հով. եւ ամէնից առաջ իմացիր, որ թէև
մարդկանց պիտի բարին եւ ճշմարիտը սովո-
րեցնես, բայց եւ այնպէս կը ծեծուես. ով
ապրում է ուրիշներից աւելի արդարամիտ
եւ այդպէս էլ սովորեցնում է մարդկանց,
նրան ամէնից աւելի են հետևում եւ հալա-
ծում: Այդպիսի դէպքում էլ իմացիր, որ
դու միայն պէտք է խղճաս նրանց, ովքեր

քեզ ծեծում են, որովհետև որպէս ճշմար-
տութեան ուսուցիչ, դու հայր եւ եղբայր ես
բոլոր մարդկանց:

Էպիկտետի գաս գաս մտքերը

Եթէ ճշմարտապէս հաւատում ես
կեանքի մասին քո ունեցած ճշմարիտ հաս-
կացողութեան եւ ցանկանում ես մարդկանց
բարութիւն, դէպքը բերած ժամանակը պէտք
է բացատրես քո միտքը ուրիշներին այն-
պէս, որ հասկանալի լինի ամէնքին. եւ այդ-
պիսի դէպքում քո խօսակիցն որչափ էլ
սխալուի, այդ աւելի կարևոր եւ ցանկա-
լի է, որպէսզի նա աւելի լաւ հասկանայ
եւ գնահատի այն, ինչ որ դու ցանկա-
նում ես նրան ապացուցանել: Բայց յաճախ
մենք վերաբերում ենք ընդհակառակը.
մենք մարդկանց հետ կարողանում ենք
քաղցր զրուցել եւ այլն, բայց երբ տեսնում
ենք, որ մեր խօսակիցը չէ հաւատում այն
ճշմարտութեան, որի մէջ մենք համոզուած
ենք կամ թէ նոյն իսկ չի հասկանում այն,
այն ժամանակ, ճշմարիտ է, աշխատում ենք
բացադրել նորան այդ ճշմարտութիւնը: Իսկ

եթէ նա չարունակում է չհամաձայնուել մեզ հետ, հեշտութեամբ դրդուում և կորցնում ենք մեր հանգստութիւնն ու սկսում ենք բարկանալ և մեր խօսակցին անվայել բաներ ասել, կամ թէ ընդհատում ենք մեր խօսակցութիւնը, մտածելով, որ այդ տեսակ անհասկացող և յամառ մարդու հետ չարժէ խօսել կամ դրուցել: Եթէ քեզ ծանօթ ճանապարհով անցնելիս հանդիպես ճանապարհը մօլորած մարդու, անկասկած ցոյց կը տաս նրան ուղիղը: Յոյց տուր և այն մարդուն, որն ապրում է մօլորութեանց մէջ, թէ որտեղ է գտնուում ճշմարտութիւնը. սակայն ցոյց տուր այնպէս, որ տեսնել կարողանայ, իսկ եթէ չես կարողանում ցոյց տալ նրան ճշմարտութիւնը, այն ժամանակ մի ցաւիր նրա վրայ, այլ աւելի շուտ քեզ վրայ, որովհետև ալ այդպէս անդօր ես:

* *

Եթէ ցանկանում ես քո խօսակցին մի որևիցէ ճշմարտութիւն ցոյց տալ, պէտք է չդրդուես և ոչ էլ որևէ վատ կամ վիրավորական խօսք ասես:

Եթէ փողոց նետենք պոպոկներ, երեխաներն իսկոյն միմիանց դուրս շարդելով կը վազեն և կը սկսեն հաւաքել. այդպիսի բանի համար հասակաւորները չեն կռուի, ինչպէս որ դատարկ կեղևները համար չեն վիճի երեխաները և այլն:

Ինձ համար փողը, իշխանութիւնը, պատիւները, փառքը նոյն են, ինչ որ երեխաների համար կեղևները: Թող ուրիշները համբուրեն հարստի, իշխանների և սրանց ծառաների ձեռքերը, այս կամ այն պատիւը ձեռք բերելու և այլն, սակայն այդ բոլորն ինձ համար ոչնչութիւն են. դրանց հասնելու համար չարժէ կռուել, տապալել սրան կամ նրան. եթէ պատահմամբ ձեռքս ընկնի մի որևիցէ պոպոկ, ինչո՞ւ չպէտք է ուտեմ, բայց այն վերցնելու համար կռուելը, ծեծելը միանգամայն անմտութիւն է:

* *

Մարդկանցից մէկն այս է ճշմարիտ համարում, միւսն այն. բայց չէ որ երկու հակառակ կարծիքները միաժամանակ ճշմարիտ լինել չեն կարող: Ես, ասում ես դու, իմ կարծիքն եմ ճշմարիտ համարում, իսկ ուրիշ

չինք սխալ. բայց ինչպէս իմացար, որ քո կարծիքը ճշմարիտ է, իսկ ուրիշինք սխալ. բաւական չէ, որ դու քո կարծիքը ճշմարիտ ես համարում. երբ մեզ հարկաւոր է, օրինակի համար, չափել մի օրևիցէ տարածութիւն, այդ դէպքում չենք բաւականանում այս կամ այն մարդու ասածով, այլ չափում ենք այդ տարածութիւնը յայտնի չափով արշինով կամ սաժէնով: Այդ, եթէ այդպիսի հասարակ բաների համար կայ յայտնի չափ, միթէ մեր կեանքի նկատմամբ կարևոր նշանակութիւն ունեցող խնդիրների համար, դոյութիւն չունի այդ չափը: Այդ չափը դոյութիւն ունի և օրպէսզի կարողանանք ձեռք բերել այն, պէտք է ամէնից առաջ, շատ լաւ հասկանանք, թէ ինչի մէջ է մեր իսկական բարիքը և ինչի մէջ՝ չարիքը, և առհասարակ որն է նրանց գլխաւոր յատկութիւնը:

Երբ այս պարզենք մեզ համար և պայծառ կերպով հասկանանք, այն ժամանակ արդէն մեր ձեռքում կ'ունենանք այն չափը, որը փնտռում ենք:

Օրինակ ցանկանում եմ իմանալ, բարիք թէ չարիք է մի օրևիցէ մարմնական զուարճութիւն. ոմանք ասում են բարիք է, իսկ ոմանք՝ չարիք...:

Մենք ամենքս էլ գիտենք, որ ճշմամիտ բարիքը միշտ մեր հոգուն բաւականութիւն է պատճառում. քննիր այժմ և տես այդպէս է արդեօք մեր մարմնական զուարճութիւնը: Այդ հարցին ամենայն ուշիմութեամբ և ճշմարիտ կերպով պէտք է պատասխանես. որովհետև եթէ ասես, որ մարմնական զուարճութիւնը կարող է մեր հոգուն բաւականութիւն պատճառել, դրանով միայն ցոյց կը տաս, որ չես կարողանում օգտուել բարութեան և չարութեան չափից:

Իսկական իմաստութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ կարողութիւն պարզելու և վերականգնելու բարութեան և չարութեան իսկական չափը: Ամէն մի խելօք մարդ պէտք է իւր կեանքի բոլոր խնդիրների նկատմամբ պահէ այդ չափը:

* *
*

Իսկական բարիքը ճշմարիտ հասկացողութեանց և բարի ցանկութեանց մէջ է, իսկ չարիքը՝ սխալ հասկացողութեանց և վատ ցանկութեանց մէջ:

Մեր հողին նման է ջրով լիքն ամանի, իսկ միտքը, որ մեր գլխում յղանում է, նման է այդ ջրի մէջ արտացոլուած լոյսի. երբ ջուրն ամանի մէջ օրօրում է, թւում է թէ օրօրում է նաև լոյսը, թէև իրապէս այդպէս չէ: Ճիշտ նոյն կերպ էլ, երբ մեր հողին ալեկոծում է, թւում է թէ մեր մտքերն էլ երբեքում և շփոթում են. սակայն իրապէս ալեկոծում է միայն մեր հողին. երբ հանդարտում է նա, մեր մտքերն էլ խաղոյն և եթ կարգի են ընկնում:

* *

Պէտք է պահենք, պահպանենք այն, ինչ որ մերն է և չցանկանանք այնպիսի բան, ինչ որ մերը չէ: օգտուենք նրանով, ինչ որ մեզ են տալիս. լաց չլինենք նրա համար, ինչ որ մեզ չեն տալիս. յօժարակամ և առանց հակառակելու տանք այն, ինչ որ մեզանից վերցնում են և փառք տանք Աստծուն, որ բաւական ժամանակ օգտուեցիք:

* *

Ամբողջ կեանքն անցկացնել որպէս կատարեալ մարդ, այնքան էլ հեշտ և թեթև բան չէ: ինչպէս այդ թւում է ըստ երևու-

թին առաջին հայեացքից: Մենք գիտենք, որ մարդս տարբերում է վայրենի դազաններից և ընտանի կենդանիներից իւր բանականութեամբ. նշանակում է, եթէ մենք ցանկանում ենք կատարեալ մարդ դառնալ, չպէտք է հետևենք ոչ դազաններին և ոչ էլ անասուններին:

Բայց երբ է մարդս անասունի նմանում:

Այն ժամանակ, երբ նա ապրում է ստամոքսի համար, առանց մտածելու, անփոյթ, հեշտասէր և այլն:

Բայց երբ է նմանում նա վայրենի դազանի:

Այն ժամանակ, երբ ապրում է բռնի ուժով և վերաբերում է յամառութեամբ, չարութեամբ ու դայրոյթով:

* *

Մարդս միայնակեաց կեանքի համար չէ ստեղծուած, այլ ընկերական, որպէսզի սիրէ իւր նմաններին և բախտաւորութիւն գտնէ մերձաւորների հասարակութեան մէջ. բայց և այնպէս մարդ չպէտք է տխրի և այն ժամանակ, երբ ստիպուած է մենակ ապրել:

նա պէտք է անարտում տանել կարողանայ, օգտուի իւր առանձնութիւնից և խորհի ինքն իրեն. մտածէ Աստուծոյ և այն բանի մասին, թէ այս աշխարհում մարդուն ինչ է վիճակուած: Գտնուելով առանձնութեան մէջ, պէտք է քննենք մեր անցեալ և ներկայ վարք ու բարքը, և տեսնենք թէ ինչ բանն իսկապէս մեր արդար ապրելուն արգելք է հանդիսանում և ինչ միջոցներով կարող ենք աղատուել այն արգելքներից և ապա կռիւ մղել այն թուլութեանց ու յանցանքների դէմ, որոնց մենք մեր մէջ նշմարում ենք: Խելացի է այն մարդը, որը կարողանում է յարակցել իւր մտքերը գործի հետ բնութեան օրէնքների համաձայն:

Իւրաքանչիւր մարդ երկու բան ունի անելու. ա) ընթանալ ճշմարտութեան ուղիով, հեռացնել ցնորքները և չդատել այն մասին, ինչ որ անորոշ ու անյայտ է:

բ) Սիրով կատարել այն ամէնը, ինչ որ բարի է, վախշել չարութիւնից և ուշադրութիւն չդարձնել այն բանի վրայ, ինչ որ ոչ չարիք է և ոչ էլ բարիք:



Այն մարդը, որը չի իմանում թէ իւր աչքերը կարողանում են տեսնել և որը երբէք չի փորձել բաց անել նրանց, շատ ողորմուի է. բայց աւելի ողորմելի է այն մարդը, որը չի հասկանում թէ իրեն խելք և միտք է պարզուած, որպէսզի համբերութեամբ տանէ բոլոր անյաջողութիւնները, մեր մտքի օգնութեամբ կարող ենք բոլոր անյաջողութիւնները վերացնել: Խելօք մարդը իւր կեանքի մէջ համարեա թէ չի պատահում անյաջողութիւնների. իսկ Աստուած էլ մեր հօգին չի ենթարկել սրան կամ նրան, ոչ մեր ծնողներին, ոչ եղբայրներին, ոչ մեր մարմնին, ոչ հարստութեան և ոչ էլ մահուան:


Նա ենթարկել է նրան միմիայն մեր բանականութեան:

* *
*

Ազատ համարել կարելի է այն մարդուն, որի հետ ամէն բան պատահում է այնպէս, ինչպէս նա ինքն է ցանկանում: Բայց մի՞թէ այս նշանակում է, որ նրա հետ առանց այլևայլութեան կը պատահի այն ամէնը, ինչ որ նա մտածում է. ամէնեւին ոչ: Օրի-

նակի համար, գրագլխաւթիւնը մեզ տառերով և բառերով սովորեցնում է գրել այն ամէնը, ինչ որ մենք ցանկանում ենք. բայց նոյն իսկ հէնց իմ անունը գրելու համար չեմ կարող դորձ ածել այնպիսի տառեր, որպիսին ես իմ ուղում. այլ ընդհակառակը, պէտք է ցանկանամ գրել հէնց այնպիսի տառեր, որպիսիք հարկաւոր են և այն կարգով, ինչ կարգով պէտք են. այլ կերպ երբէք չեմ կարող գրել իմ անունը:

Ամէն բանի նկատմամբ էլ այդպէս է. մենք երբէք ոչինչ չէինք սովորի, եթէ անէինք հէնց այնպէս ինչպէս մենք ենք մտածում: Հետևաբար ազատ մարդ լինելու համար չպէտք է ցանկանալ այն ամէնը, ինչ որ միայն մեր խելքը կը փչէ, այլ ընդհակառակը, պէտք է ցանկանալ և համաձայնուել այն բաների հետ, ինչ որ պատահում է. որովհետև այն ինչ որ մարդու հետ պատահում է, լինում է ոչ թէ պատահական կերպով, այլ նրա կամքով, ով կառավարում է ամբողջ աշխարհը:



Առ Աստուած ունեցած յարաբերութեան մասին.

Աստուծոյ հետ այնպէս պէտք է վերաբերուել, ինչպէս մեր աչքերի հետ. մենք չենք պահանջում, որ մեր աչքերը տեսնեն այն, ինչ որ չենք ուզում տեսնել, այլ ընդհակառակը, շատ դժ ենք, որ նորա տեսանելի են դարձնում առարկաները այնպէս, ինչպէս որ կան իրականապէս: Ինչո՞ւ Աստուծոյ նկատմամբ այդպէս չենք վերաբերուում. ինչո՞ւ համար ենք աղերսում Աստուծն խղճալ ու տալ մեզ այն, ինչ որ մենք ենք ցանկանում և ոչ թէ բաւականանում նրանով, ինչ որ ստանում ենք: Միթէ Աստուծոյ անօրէնութիւնից աւելի լաւ բան կայ:

* * *

Երբ քեզ հետ Աստուծոյ մասին եմ խօսում, մի մտածիր, որ խօսում եմ միտքից և սկիւղ կամ արծաթից շինուած առարկայի մասին: Այն Աստուածը, որի մասին քեզ հետ խօսում եմ, բնակուում է քո հոգու մէջ. դու կրում ես նրան քեզ հետ և քո վատ

մաքերով և զզուելի դործերով, վարձուհրով պղծում ես Նրա պատկերը քո հոգու մէջ։ Ոսկէ կուռքի առաջ, որին Աստուծոյ տեղ ես համարում, քաշւում ես մի ինչ որ անվայել բան անելուց, բայց այն Աստուծոյ պատկերի առաջ, որն ամէն բան տեսնում և լսում է, նոյն իսկ չես կարժուում, երբ անձնատուր ես լինում՝ քո զզուելի մաքերին ու դործերին։ Եթէ մենք ընդ միշտ յիշենք, որ Աստուած մեր մէջ է, վկայ է այն ամէնի, ինչ որ մենք անում և մտածում ենք, յանցանք չէինք գործի և Աստուած կը բնակուէր մեր մէջ։ Իէհ ուրեմն յիշենք Աստուծուն, մտածենք և խօսենք Նրա մասին, որքան հնարաւոր է յաճախ։

* *

Եթէ իրօք դու լաւ հասկանաս թէ որպիսի մեծ Վարպետի ձեռքով ես ստեղծուած, այն ժամանակ ամէնեւին չես ցանկանայ քո մեղաւոր և յանցաւոր կեանքով վիրաւորել Նրան։ Յիշիր և այն, որ Նա ոչ թէ միայն ստեղծել է քեզ, այլ և հրամայել է, որ ինքդ քեզ պահպանես։ Մի՞թէ կարող ես ապականել այն, ինչ որ Նա քեզ է հաւատացել. եթէ


Աստուած քեզ է յանձնել որբերի պահպանութիւնն ու հոգատարութիւնը և դու ջանացել ես նրանց պահպանել վնասներից, ճիշտ նոյն կերպ էլ քեզ քո խնամքին և պահպանութեան է յանձնել ասելով. «Պահպանիր դու այդ մարդուն այն մաքուր պատկերում, որի մէջ ես լոյս աշխարհ հանեցի. նա ծնուել է աղնիւ, հաւատարիմ և մաքուր հոգով. պահպանիր ուրեմն իւր ամբողջութեամբ»։



Յ Ա Ն Կ

	Էջ
Էպիկտետի կեանքը	1
Էպիկտետի վարդապետութեան եռփունքը	20
Է Պ Ի Կ Տ Ե Տ Ի Չ Ր Ո Յ Յ Ն Ե Ր Ը :	
I Սիրելի բարեկամին	22
II Փոքրոցի բարեկամին	23
III Ինչպէս պէժ է կռուել արատաւոր ցանկութիւնների դեմ	28
IV Անկարելի է միաժամանակ համեստ եւ աճառակ կեանքով ապրելը	33
V Բարեգործութիւնը կորուստ չէ	36
VI Ինչո՞ւ համար են մարդիկ վրդովուում, անհանգիստ լինում	37
VII Խելացի ապրողն ազատ է աշխարհային ալեկոծութիւններից	40
VIII Խելոք մարդը հետէ կապրի	42
IX Խելոք մարդն ամեն բանում էլ կարող է իրեն համար օգտակար բան գտնել	44
X Շարունակ տրտմանը, զանգատելն անմտութիւն է	45
XI Ինչ քան ինչ քան ինչ քան մի փնտրիչ այն բանում, ինչ որ է ի իշխանութեան ներքոյ չէ	48
XII Ինչի՞ մէջ պէժ է փնտրել բարիքը	54

	Էջ
XIII Ինչից պէժ է եւ ինչից չպէժ է վախենալ	57
XIV Խելոք մարդը չի վշտանայ բարբառանքից. ոչ կը գոռոզանայ եւ ոչ էլ կը նախանձի	61
XV Ի՞նչպէս պէժ է համբերութեամբ սանել վիրատուանքը	66
XVI Ինչը կարող է ինչը չենք կարող գործել	71
XVII Մարդ պէժ է անզաղար կերպով հսկէ, դիտէ իրեն	76
XVIII Մի դատիւ ուրիշներին եւ մի լինիր ինքնահաւան	80
XIX Ի՞նչպէս է վերաբերում իսկական մարդը	84
XX Ո՞րն է նշանակաւորութիւնը	86
XXI Ինչո՞ւ համար պէժ է կարգաւ գրքերը Էպիկտետի գրքերը	115
Առ Աստուած ունեցած յարաբերութեան մասին	121
	131



6

« Ազգային գրադարան



NL0147022

474

